2023, ԴԵԿՏԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 24 (644)

Էջմիածնի Կաթողիկոսություն

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Դեկտեմբերի 18-ին

ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Աբրահամ քհն. Մալխասյանին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի Ֆորդհամի համալսարանում աստվածաբանական գիտությունների դոկտորի կոչման արժանացած՝ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի Սրբոց Նահատակաց եկեղեցու (Նյու Յորք) հոգևոր հովիվ Տ. Աբրահամ քհն. Մալխասյանին:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ տեր հայրն իր ուսումնառությունը շարունակել է Ֆորդհամի համալսարանի կրոնագիտության ֆակուլտետում՝ պաշտպանելով դոկտորական թեզ՝ «Հոգևոր հոտից անջատման խնդիրը Հայ Եկեղեցում նոր հազարամյակին ընդառաջ» թեմայով, և դասախոսում է Նյու Յորքի Սուրբ Հովհաննեսի անվան համալսարանում:

Ներկայացնելով իր դոկտորական աշխատանքը Նորին Սրբությանը՝ Տ. Աբրահամն ընդգծեց, որ աշխատության նպատակն է բացահայտել այն արդի մարտահրավերները, որոնց պատճառով երիտասարդ ընտանիքները դժվարանում են մասնակից լինել եկեղեցական կյանքին և գտնել դրանց հաղթահարման ուղիները:

Ամենայն Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ տեր հոր գիտական ձեռքբերմանը՝ ընդգծելով, որ սույն աշխատությունը կարևոր նպաստ է հովվական աստվածաբանության ոլորտում և հնարավորություն հոգևորականներին՝ ի մոտո ծանոթանալու երիտասարդությանը վերաբերող հիմնահարցերին:

Հայոց Հովվապետն ուրախությամբ արձանագրեց, որ եկեղեցականները հովվական ծառայությանը զուգահեռ ծավալում են նաև գիտական գործունեություն՝ հարստացնելով իրենց գիտելիքներն ի նպաստ հոգևոր ծառայության առավել արդյունավորման:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը, որպես գնահատանք, Տ. Աբրահամին ընծայեց քահանայական լանջախաչ:

Վերջում տեր հայրը Նորին Սրբությանը հանձնեց իր աշխատությունն ու դոկտորական կոչման վկայականը:

Դեկտեմբերի 25-ին

Կաթողիկոսական գրասենյակի գործավարքարտուղար Տ. Գրիգորիս վրդ. Շողիկյանին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մեծ Բրիտանիայի Նոթինգեմի համալսարանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի կոչման արժանացած Կաթողիկոսական գրասենյակի գործավարքարտուղար Տ. Գրիգորիս վրդ. Շողիկյանին: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ հայր Գրիգորիսն իր ուսումնառությունը շարունակել է Նոթինգեմի համալսարանի աստվածաբանության և կրոնագիտության ֆակուլտետում՝ պաշտպանելով դոկտորական թեզ՝ «Հայոց պատարագամատույցի պատմագիտական վերլուծություն. ծիսաաստվածաբանական դիսկուրսի քննություն» թեմայով:

Հայր սուրբը, Նորին Սրբությանը ներկայացնելով դոկտորական թեզը, ընդգծեց, որ իր աշխատության նպատակն է հայոց պատարագի մանրաքննին վերլուծությամբ պատմականորեն արժևորել համաքրիստոնեական համատեքստում հայկական պատարագի ձևավորումն ու զարգացումը:

Ամենայն Հայոց Հայրապետը, շնորհավորելով հայր սուրբին՝ գիտական ձեռքբերման համար, գոհունակությամբ ընդգծեց, որ սույն աշխատությունը հնարավորություն կընձեռի քրիստոնեական Եկեղեցիների աստվածաբաններին՝ ի մոտո ծանոթանալու հայկական պատարագի ծիսաաստվածաբանական առանձնահատկություններին:

Հայոց Հովվապետն ուրախությամբ արձանագրեց, որ հայ եկեղեցականները, ուսանելով աստվածաբանական համալսարաններում և ծավալելով գիտական գործունեություն, իրենց կարևոր նպաստն են բերում Հայ Եկեղեցու առաքելությանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց հայր սուրբին՝ նոր ուսումնասիրություններով արգասավորել ամբարած գիտելիքները:

Վերջում Գրիգորիս վարդապետը Նորին Սրբությանը հանձնեց իր աշխատությունն ու դոկտորական կոչման վկայականը:

Մայր Աթոռի սարկավագաց դասին

Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռում սպասավորող, Գևորգյան հոգևոր ճեմարանի և նորընծա սարկավագներին՝ ուղեկցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանի, Արցախի թեմի առաջնորդ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի և Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Շահե ծ. վրդ. Անանյանի:

Սարկավագները Հայոց Հովվապետին ողջունեցին «Ստեփանոս, քաղցրիկ տատրակ» տաղի երգեցողությամբ, այնուհետև՝ Տերունական աղոթքից հետո, լուսարարապետ սրբազան հայրը, սարկավագաց դասի անունից շնորհավորելով Նորին Սրբությանը Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնի կապակցությամբ, հայցեց Հայոց Հայրապետի օրհնությունը:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով և իր հայրական օրհնությունը փոխանցելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սպասավորող և նորընծա սարկավագներին օրվա խորհրդի առիթով, անդրադարձավ Սուրբ Ստեփանոսի՝ Քրիստոնեական Եկեղեցու առաջին նահատակի անձին ու կերպարին՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր հոգևորական պետք է իր մեջ կրի նախասարկավագի նվիրումի և նահատակության ոգին: Հայոց Հովվապետը սարկավագաց դասին պատգամեց, որ Սուրբ Ստեփանոսի նվիրումը, հավատքը, աստվածսիրությունն ու արիական ոգին օրինակ ունենալով՝ իրենց ծառայությունը բերեն Քրիստոսի Եկեղեցուն և հայրենիքին, անձնվիրաբար քարոզեն Քրիստոսի Ավետարանը՝ փառավորելով խաչյալ Տիրոջը:

Նորին Սրբությունը հորդորեց նաև նմանվել իրենց եկեղեցական այն եղբայրներին, որոնք նվիրումով ու քաջությամբ, իրենց կյանքը չխնայելով, նախասարկավագի անձնազոհության բարձր գիտակցությամբ առաջնագծում կանգնած են եղել հայ զինվորի կողքին, գոտեպնդել ու քաջալերել վերջիններիս:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ Դադիվանքում հանձնառությամբ, քաջարի ոգով և սիրով, դժվար ու ծանր պայմաններում ծառայություն բերած սարկավագներին:

Հայոց Հայրապետը նաև կարևոր նկատեց սարկավագների հոգեխնամ առաքելության իրականացումը հայրենազրկված արցախցիների նկատմամբ՝ պատգամելով ամեն ջանք ներդնել նրանց աջակցություն ցուցաբերելու համար:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Աստված մշտապես ոգեշնչի, խանդավառի և գոտեպնդի սարկավագաց դասին՝ իրենց ծառայությունը լավագույնս արդյունավորելու համար: ➥ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



↩ էջ 1

Դեկտեմբերի 28-ին

«Նյումեգ» հրատարակչության ստեղծագործական կազմին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Նյումեգ» հրատարակչության ստեղծագործական կազմին՝ ուղեկցությամբ «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժին տնօրեն Տ. Արարատ քհն. Պողոսյանի:

Հանդիպմանը «Նյումեգ» հրատարակչության գործադիր տնօրեն Արտակ Ալեքսանյանը, հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը, խոսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի և «Նյումեգ»-ի միջև ստորագրված հուշագրի ու համատեղ իրականացված ծրագրերի մասին:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով ներկաներին, գոհունակությամբ անդրադարձավ Մայր Աթոռի և «Նյումեգ»-ի միջև առկա համագործակցությանը, որի շնորհիվ տպագրվել է քրիստոնեությանն առնչվող հանրամատչելի ու գիտահանրամատչելի գրականություն: Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց նաև հրատարակչության տնօրինությանը և ստեղծագործական կազմին՝ հայորդիների կրթության, դաստիարակության և արժեքային համակարգի ձևավորմանն ի նպաստ ներդրած ջանքերի համար:

Հանդիպման վերջում ներկաներն իրենց հարցերն ուղղեցին Վեհափառ Հայրապետին, որոնք վերաբերում էին հայրենիքի և հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին և դրանց հաղթահարմանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատապարտում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության և հայ համայնքի նկատմամբ իրականացված բռնությունները



Խոր մտահոգությամբ տեղեկացանք Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանին պատկանող «Կովերի պարտեզ» կալվածքի շուրջ շարունակվող սադրիչ գործողությունների մասին: Դեկտեմբերի 28-ին երեք տասնյակից ավելի զինված անձինք ներխուժել են «Կովերի պարտեզ»-ի տարածք, իրականացրել բռնի գործողություններ, որի հետևանքով մարմնական տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել Պատրիարքության եկեղեցականներ և տեղի հայ համայնքի անդամներ:

Ակնհայտ է, որ սադրիչները հերթական անգամ փորձում են ահաբեկության, սպառնալիքների ու բռնի գործողությունների միջոցով հասնել «Կովերի պարտեզ» կալվածքի յուրացմանը՝ ոտնահարելով օրենքով սահմանված ընթացակարգերը:

Խստորեն դատապարտելով կատարվածը՝ հույս ենք հայտնում, որ Իսրայելի իշխանությունները իրավաչափորեն կարձագանքեն Պատրիարքության և հայ համայնքի նկատմամբ դրսևորված հանցավոր գործողություններին, պատասխանատվության կենթարկվեն մեղավորները, և կբացառվի նմանօրինակ դեպքերի կրկնությունը:

Մեր զորակցությունն ենք հայտնում Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց զինվորյալ միաբանությանը և հայ համայնքին՝ հայցելով Տիրոջ օգնականությունը:

Եկեղեցական նորություններ



Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի բերվեց Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի մասունքակիր խաչը

Դեկտեմբերի 16-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, հոգևորականաց թափորը շարականների երգեցողության ներքո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցի բերեց Սուրբ Ներսես Շնորհալի Հայրապետի մասունքակիր խաչը՝ հավատացյալների հոգևոր մխիթարության և երկրպագության համար:

Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցում Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց օրհնության կարգ, որի ավարտին Նորին Սրբությունը սրբազան մասունքով օրհնեց ներկա հավատացյալ ժողովրդին:

Երանաշնորհ հայրապետի վախճանման 850-րդ տարելիցի առիթով մասունքարանը Մայր Աթոռին է ընծայաբերվել Բուլղարիայի Պլովդիվ

քաղաքի Սուրբ Գևորգ եկեղեցու կողմից:

Սրբի մասունքը եկեղեցում մնաց մինչև 18:00-ը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Մայր Աթոռում վերապատրաստման դասընթացներն ավարտած եկեղեցականների հետ

Դեկտեմբերի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնում հանդիպեց հերթական երեքշաբաթյա վերապատրաստման դասընթացներն ավարտած հոգևորականներին, որոնք ժամանել էին Հայաստանի և Սփյուռքի տարբեր թեմերից:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը, ամփոփելով տարին, անդրադարձավ դասընթացների արդյունավետությանը: Սրբազան հայրը Նորին Սրբությանը տեղեկացրեց, որ առայսօր վերապատրաստման դասընթացներին մասնակցել է 68 հոգևորական:

Վերապատրաստման դասընթացներին մասնակից հոգևորականների անունից Ամենայն Հայոց Հայրապետին ողջունեց Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի Սիդնեյ քաղաքի Սուրբ

Հարություն առաջնորդանիստ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ավետիս քհն. Համբարձումյանը: Տեր հայրն իր երախտագիտությունը հայտնեց Հայոց Հովվապետին դասընթացների կազմակերպման համար՝ վստահեցնելով, որ Սուրբ Էջմիածնի հետ ուխտը նորոգած, նոր գիտելիքներ ամբարած և հոգևոր խանդավառությամբ կվերադառնան իրենց հովվական ծառայությանը:

Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը փոխանցելով հոգևորականներին, ընդգծեց Մայր Աթոռում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների կարևորությունն իրենց հոգևոր սպասավորության առավել արդյունավորման համար եկեղեցականը պետք է բարձր գիտակցությամբ և անսակարկ նվիրումով իրականացնի իր ծառայությունը ազգին, հայրենիքին ու եկեղեցուն:

Հայոց Հայրապետը նաև հորդորեց եկեղեցականներին հոգեխնամ առաքելություն իրականացնել հայրենազրկված արցախցիների նկատմամբ և ամեն ջանք ներդնել՝ նրանց աջակցություն ցուցաբերելու համար:

Վերջում Նորին Սրբությունը, հոգևոր հայրերին փոխանցելով իր գնահատանքն ու սերը, մաղթեց Աստծու զորակցությունը և Սուրբ Հոգու առաջնորդությունը իրենց պատասխանատու ծառայության ոլորտում:

Տեղի ունեցավ հայրենական կյանքի կրթական հիմնախնդիրներին նվիրված քննարկում

Դեկտեմբերի 21-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հայրենական կյանքի կրթական հիմնախնդիրներին նվիրված քննարկում:

Քննարկմանը մասնակցում էին Մայր Աթոռի կրթական հանձնախմբի հոգևորական և աշխարհական անդամները, կրթական հաստատությունների ու կառույցների ներկայացուցիչներ, ճանաչված մտավորականներ ու մասնագետներ: Քննարկվեցին հանրակրթության բնագավառում ԿԳՄՍ նախարարության նախաձեռնած փոփոխություններին առնչվող հարցեր: Մասնակիցները վերահաստատեցին հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերաբերյալ արտահայտած վերապահումները, մասնավոր անդրադարձ ունեցան «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի նոր դասագրքին: Արձանագրվեց, որ դպրոցական հիշյալ ձեռնարկում տեղ են գտել հայեցակարգային, մեթոդաբանական, գիտական, այդ թվում եկեղեցագիտական և կարևորագույն այլ բնույթի կոպիտ սխալներ ու բացթողումներ: Խոր մտահոգությամբ արձանագրվեց, որ դասագրքում օբյեկտիվությամբ ու պատշաճ ծավալով ներկայացված չեն ազգային, պետական ու հոգևոր կյանքի պատմական կարևորագույն իրադարձությունները, կերպարներն ու խորհրդանիշերը:

Ելնելով արտահայտված վերապահումներից՝ քննարկման մասնակիցներն ընդգծեցին, որ աղճատված և սխալաշատ այս դասագրքի ուսուցմամբ խաթարվելու է սերունդների ազգային դաստիարակության ու կրթության կարևորագույն առաքելությունը:

Անհրաժեշտ համարվեց, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը վերոգրյալ դասագիրքը դուրս բերի դպրոցների գործածությունից և ձեռնամուխ լինի նոր դասագրքի ստեղծմանը՝ այդ գործընթացում ներգրավելով պատմաբանների, եկեղեցականների և գիտակրթական հաստատությունների ու մասնագիտական հանրույթի պատասխանատու ներկայացուցիչների:

Կարևոր նկատվեց, որ կրթական ոլորտի՝ մասնավորաբար հայագիտության խնդիրների վերաբերյալ պարբերաբար կազմակերպվեն նմանօրինակ քննարկումներ՝ ներդրում բերելու հիշյալ բնագավառի հիմնախնդիրների կարգավորմանը և որակյալ կրթության ապահովմանը:

Քննարկումն ավարտվեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ մասնակիցներին ուղղված գնահատանքի և օրհնության խոսքով:

Մայր Աթոռում կազմակերպվեց ամանորյա ընթրիք արցախցի ընտանիքների մասնակցությամբ

Դեկտեմբերի 31-ին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կազմակերպվեց միաբանական ընթրիք, որին մասնակցում էին նաև Մայր Աթոռի հովանու ներքո ապաստան գտած արցախցի ընտանիքները:

Երեկույթին Ամենայն Հայոց Հայրապետն իր հայրական պատգամն ու օրհնությունը բերեց հայրենազրկված արցախցիներին՝ հորդորելով ապագայի նկատմամբ լավատեսությամբ, զորեղ հավատքով, անկոտրում կամքով ու հույսով հաղթահարել իրենց առջև ծառացած մարտահրավերները և դժվարությունները, իրենց զավակներին դաստիարակել քաջարի ոգով ու հայրենյաց սիրով:

Նորին Սրբությունը, բարի և օրհնյալ տարի մաղթելով Արցախից բռնի տեղահանված հայորդիներին ու միաբանությանը, հայցեց Տիրոջ օգնականությունը մեր ժողովրդի բարօր ու ապահով կյանքի համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Սուրբ Ստեփանոսի տոնին կատարվեց սարկավագական ձեռնադրություն

Դեկտեմբերի 25-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց Սուրբ Ստեփանոս Նախավկայի և առաջին մարտիրոսի հիշատակության օրը, որը նաև եկեղեցու անդաստանում ծառայող սարկավագների տոնն է:

Տոնի առիթով Արմավիրի թեմի Սուրբ Աստվածածին եկեղեցում (ք. Վաղարշապատ), Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Արցախի թեմի առաջնորդ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ Արցախի հոգևոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի ձեռամբ սարկավագական ձեռնադրության արժանացավ Գևորգյան հոգևոր ճեմարանի Ե լսարանի 11 սան:

Նախօրդ օրը՝ դեկտեմբերի 24-ի երեկոյան, Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցի Սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի մատուռում, ձեռամբ Մայր Աթոռի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանի, տեղի էր ունեցել դպրության, ուրարակրության և կիսասարկավագության աստիճանների տվչության արարողություն:

Սուրբ պատարագի ընթացքում՝ ձեռնադրության սուրբ խորհրդի ավարտին, սրբազան հայրը, անդրադառնալով օրվա խորհրդին, ի մասնավորի նշեց. «Հայ Եկեղեցին, գեղեցիկ ավանդության համաձայն, համաքրիստոնեական սրբի՝ Սուրբ Ստեփանոս Նախավկայի տոնին կատարում է սարկավագական ձեռնադրություն: Աստվածային և երկնային շնորհներն անտեսանելիորեն իջնում են նորընծաների վրա՝ զորացնելով ու դարձնելով նրանց Հայ Եկեղեցու և ժողովրդի անվախ, քաջ և նվիրյալ սպասավորներ: Մեր նորագույն պատմության մեջ քիչ չեն այնպիսի սարկավագները, որոնք նմանվել են Սուրբ Ստեփանոսին՝ դառնալով նահատակներ և իրենց կյանքն առանց վարանելու զոհաբերելով հայրենիքին և Եկեղեցուն»:

Այս առնչությամբ Վրթանես սրբազանը հորդորեց հավատացյալ հայորդիներին՝ աղոթք բարձրացնել մեր նահատակ սարկավագների հիշատակի համար և հայցել Սուրբ Ստեփանոսի բարեխոսությունը, որ նորընծա սարկավագները նույն քաջասրտությամբ սպասավորները լինեն Հայ Եկեղեցու և ժողովրդի:

Քարոզի ընթացքում սրբազան հայրը նաև իր շնորհավորանքներն ուղղեց Մայր Աթոռի կրթական հաստատությունների տեսչությանը և միաբանությանը՝ Սուրբ Ստեփանոսի տոնի և սարկավագական ձեռնադրության առիթով:

Սուրբ պատարագի վերջում սրբազան հայրը «Պահպանիչ» աղոթքով և Սուրբ Ստեփանոսի մասունքակիր աջով օրհնեց նորընծա սարկավագներին և հավատավոր ժողովրդին:

Եկեղեցականները և ներկա բարեպաշտ ժողովուրդը նաև հնարավորություն ունեցան խոնարհվելու և հաղորդակցվելու տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Արմավիրի թեմի Սուրբ Աստվածածին եկեղեցի բերված Սուրբ Ստեփանոսի մասունքին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչության՝ 2023 թ. լույս ընծայած գրականությունը

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը 2023 թ. շարունակել է իր ուրույն գործունեությունը՝ հրատարակելով և տարածելով գիտական, հոգևոր-ուսուցողական, քարոզչական, պատմագեղարվեստական, փաստավավերագրական գրականություն: Հրատարակչությունը լույս է ընծայել 17 անուն գիրք, որոնք են՝

1. *«Ցուցակ կաթողիկոսական դիվանի Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվի»*, հտ. Ա, (կազմողներ՝ Ա. Մալխասյան, Ն. Մարտիրոսյան, Ա. Ասատրյան, Լ. Ստեփանյան, խմբագիր՝ Արմեն Մալխասյան):

Մաշտոցյան Մատենադարանի արխիվային հավաքածուի հիմնական և ամենահին մասը կաթողիկոսական դիվանի ֆոնդն է, որը պարունակում է 1441–1975 թթ. փաստագրեր: Ֆոնդում ընդգրկված է 42 123 միավոր վավերագիր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսության և նվիրապետական աթոռների, թեմերի, գաղթավայրերի հետ ունեցած փոխհարաբերությունների, հայ և օտար ժողովուրդների կրոնական, քաղաքական, տնտեսական, վիճակագրական և այլ հարցերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ պարունակող: Կարևոր են կաթողիկոսների՝ օտար թագավորներին ուղղված կոնդակները և նրանցից ստացած պատասխան հրովարտակներն ու գրությունները: Մեծաքանակ նյութեր կան Մայր Աթոռ Ս. Էջմիածնին նվիրաբերած գույքի, տրված ստացականների, այլևայլ հաշվեմատյանների վերաբերյալ: Առանձնապես արժեքավոր և հազվագյուտ վավերագրերը՝ կաթողիկոսների կոնդակները, ցարական հրովարտակները, շահերի, սուլթանների հրամանագրերը, եզակի քարտեզները և այլն, ունեն համաշխարհային պատմամշակութային նշանակություն:

2. *«Գարեգին Ա Հովսեփյան: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու*, հտ. Գ (կազմող՝ Գոհար Ավագյան, խմբագիր՝ Ա. Մալխասյան):

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա Հովսեփյանին վերաբերող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուի Գ հատորում ներկայացված է 330 անտիպ փաստաթուղթ, որ պահպանվում են Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ Գարեգին Հովսեփյանի անձնական ֆոնդում: Սույն հատորում ընդգրկված փաստաթղթերը հիմնականում Գարեգին Հովսեփյանին ուղղված նամակներն են հոգևորականներից և մտավորականներից, գիտնականներից ու հասարակական գործիչներից, որոնք արժեք ու հետաքրքրություն են ներկայացնում տարբեր գիտական ուսումնասիրությունների, 20-րդ դարի առաջին տասնամյակին տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունների, միաբանության անդամների փոխհարաբերությունների, Կարինի երկրաշարժից տուժածներին ցուցաբերված աջակցության, Գևորգյան ճեմարանի ու Ներսիսյան դպրոցի գործունեության, դասագրքերի հրատարակման վերաբերյալ:

3. Արմինե Տիգրանյան, *Արցախի քրիստոնեական ժառանգության ոչնչացման և բռնայուրացման ադրբեջանական քաղաքականությունը* (խմբագիր՝ պ. գ. դ. պրոֆ. Հ. Պետրոսյան):

Գրքույկում քննվում են 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախում Ադրբեջանի բռնազավթած քրիստոնեական հայկական ժառանգության (եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, համալիրներ, խաչքարեր և այլն) անօրինական թիրախավորման, ոչնչացման և բռնայուրացման եղանակները, ներկայացվում դրանց պահպանության հիմնադրույթները՝ ժառանգության «իսկության», «ամբողջականության», «մշակութային կարևորության», «բացառիկության» միջազգային սկզբունքների լույսի ներքո: ➥ էջ 4

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչության՝ 2023 թ. լույս ընծայած գրականությունը

➥ *էջ 3*

4. Տ. Հարություն վրդ. Տամատյան, *Կ. Պոլսո Հայոց Պատրիարքության վանական-դպրեվանական կյանքը* (խմբագիրներ՝ պ. գ. թ. Ա. Հարությունյան, պ. գ. թ. Ա. Ֆիշենկյան):

Հայ Եկեղեցու սրբազան առաքելության մաս է կազմում մեր ժողովրդի հոգևոր կրթությունը՝ միջնորդավորված հոգևորականների պատրաստմամբ: Այս առաքելությունից անմասն չեն մնացել նվիրապետական բոլոր Աթոռները՝ ի թիվս որոնց նաև Կ. Պոլսի Հայոց Պատրիարքությունը, որի հովանու ներքո գործող վանական և դպրեվանական կառույցների ուսումնասիրությանն է նվիրված սույն աշխատությունը: Աշխատության արժանիքներից է այդ հաստատությունների ձեռքբերումների և բացթողումների, առավելությունների և թերությունների քննությունը՝ համապատասխան եզրակացություններով և ապագայի տեսլականով, ինչը և պայմանավորում է ուսումնասիրության թե՛ գործնական, թե՛ արդիական արժեքը:

5. Քլայվ Սթեյփլս Լուիս, *Զուտ քրիստոնեություն*, «Հուն» մատենաշար (թարգմ. անգլերենից՝ Տ. Հայկազուն քհն. Սահակյանի):

Գիրքը կազմվել և հրատարակվել է հեղինակի եթերային ելույթների շարքի հիման վրա և նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար: Այն գրված է ընկերական զրույցի ոճով, ինչը մեծապես հեշտացնում և հաճելի է դարձնում ընթերցումը նույնիսկ նյութին անտեղյակ մարդու համար: Լինելով Անգլիկան Եկեղեցու հետևորդ՝ հեղինակը գրքում չի ձգտում որևէ դավանական ուղղության շահեր պաշտպանել, այլ գովաբանական ոճով, պարզ, մատչելի և ժամանակակից օրինակներով փորձում է ընթերցողին բերել քրիստոնեության ընդհանուր հարթություն՝ խուսափելով այն դրույթների մեկնաբանություններից, որոնք առնչվում են բարձրագույն աստվածաբանությանը կամ եկեղեցական պատմությանը: Գիրքը բաղկացած է չորս մասից՝ «Ճիշտն ու սխալը՝ որպես տիեզերքի իմաստի բանալի» (բնական օրենքի և բարոյական նորմերի մասին), «Ինչի՞ն են հավատում քրիստոնյաները» (քրիստոնեության և այլ կրոնների համեմատություն), «Քրիստոնեական վարքագիծ» (քրիստոնեական բարոյագիտություն), «Անձնավորությունից անդին կամ առաջին քայլերը Երրորդության վարդապետության մեջ»: Քանի որ հիշյալ ելույթները հեռարձակվել են երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, հեղինակը քննության է ենթարկում հատկապես արդիական և ամենատարբեր շահարկումների ու թյուրըմբռնումների առիթ դարձած «թշնամուն սիրելու» Քրիստոսի պատվերը՝ ինքնատիպ ձևակերպումներով և օրինակներով հստակեցնելով քրիստոնեական ուղղամիտ ըմբռնումը ընթերցողի համար:

6. Տ. Շահե ծ. վրդ. Անանյան, *Մարդն Աստծու առաջ. աղոթքի նշանակությունը քրիստոնյայի կյանքում*:

Գրքույկում հանրամատչելի կերպով ներկայացվում են աղոթքին վերաբերող հիմնական հարցադրումների մեկնաբանությունները,



որոնք կարևոր են, որ արդի քրիստոնյան գիտակցի աղոթքի տեղն ու դերն իր հոգևոր կյանքում: Աղոթքը քրիստոնյայի կյանքի ամենաէական ու կենսական սնունդն է, առանց որի անհնար է պատկերացնել քրիստոնեությունը: Սակայն աղոթքն այսօրվա հասարակության մեջ բազմաթիվ՝ հիմնականում աղճատված, սխալ մեկնաբանությունների է ենթարկվում: Գրքույկը Ս. Էջմիածնի հրատարակչության՝ «Քրիստոնյայի գրադարան» նոր մատենաշարի երախայրիքն է: Նշված մատենաշարի շրջանակում լույս են տեսնելու քարոզչական, կրթադաստիարակչական և ծիսատոնական բնույթի հանրամատչելի գրքույկներ, որոնց նպատակը հավատացյալների հոգևոր գիտելիքները հարստացնելն է:

7. Ս. Գրիգոր Տաթևացի, *Ոսկեփորիկ* (գրաբարից ռուսերեն թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Արթուր Մաթևոսյանի, խմբագիր՝ Ա. Հակոբյան):

Հայ Եկեղեցու դավանաբանության պատմության ուսումնասիրության համար ուրույն նշանակություն ունի Ս. Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկը»: Այս աշխատությունն ունի հանրագիտարանային բնույթ: Սրանում ի մի են բերված ոչ միայն կյանքի զանազան բնագավառների վերաբերյալ տեղեկությունները, այլև հայ դավանաբանական մտքի դարավոր ձեռքբերումները: Ընդգրկելով հայ բազմադարյան աստվածաբանական մտքի բոլոր հիմնադրույթները՝ «Ոսկեփորիկը» դարձել է Հայ Եկեղեցու դավանաբանության կարևորագույն ձեռնարկ:

8. Ս. Ներսես Շնորհալի, *Թուղթ ընդհանրական և Նամականի*, վերամշակված հրատ. (գրաբարից արևելահայերենի փոխադրումը՝ Տ. Մեսրոպ քհն. Արամյանի, Տ. Խաչատրյանի, Ս. Ստամբոլցյանի):

Ժողովածուն երկու առանձին գրքերի՝ միասնական հատորով վերահրատարակություն է: Առաջին մասում Ս. Ներսես Շնորհալու «Ընդհանրական թուղթն» է՝ հասարակության տարբեր շերտերին ուղղված, իսկ երկրորդում՝ «Նամականին», որի առաջին մասում ներկայացվում են 1165–1178 թթ. Հայ և Բյուզանդական Եկեղեցիների միջև ձեռնարկված միության փորձին առնչվող վավերագրեր, իսկ երկրորդ մասում՝ բացառապես Ս. Ներսեսի՝ տարբեր առիթներով ու տարբեր անձանց ուղղված նամակները: Հրատարակությունը նվիրված է Ս. Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 850-րդ տարելիցին:

9. Տ. Իսահակ վրդ. Պողոսյան, *Հայրապետը*, վիպակ (խմբագիրներ՝ Վ. Խաչատրյան, Հ. Բեգլարյան):

Վիպակը նվիրված է Ս. Ներսես Շնորհալի Հայրապետին: Բնույթով պատմագեղարվեստական է, ուր հեղինակը ներկայացնում է Շնորհալու գործունեության կարևոր դրվագները, նրա՝ իբրև դարաշրջանի մեծագույն ազգային-եկեղեցական գործչի բազմահմուտ կարողություններն արտաքին և ներքին դիվանագիտության, ներեկեղեցական և ներազգային ասպարեզներում: Շնորհալի Հայրապետի կյանքի ու գործի և պատմական իրողությունների հեղինակային ընկալումներով վիպակում ուրվագծվում են ազգային եկեղեցու գործունեությունը և նրա արժանավոր գահակալի անձնուրաց, եկեղեցասեր և հայրենանվեր կերպարը:

10. Արամայիս սրկ. Ազիզյան, *Մյուռոնօրհնությունը Հայոց Եկեղեցում, Ծիսապատմական քննություն* (խմբագիր՝ Տ. Հուսիկ աբղ. Սմբատյան):

Աշխատության խնդրո առարկան սրբալույս մյուռոնն է՝ Հայաստանյայց Եկեղեցու թերևս ամենախորհրդավոր երևույթը՝ աստվածաբանական, ծիսական, պատմական և ազգային քննությամբ: Գրքում ուսումնասիրվել են թեմային առնչվող գրեթե բոլոր հնագույն ձեռագիր մատյաններն ու հետազոտությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Մյուռոնօրհնության ծիսակարգին, մյուռոնի բաղադրությանն ու պատրաստման կերպին:

11. Վարդան Դևրիկյան, *Սրբալույս մյուռոն* (հրատարակության պատրաստեցին Տ. Արարատ քհն. Պողոսյանը և Արամայիս սրկ. Ազիզյանը):

Մյուռոնօրհնության սրբազնագույն արարողությանը վերաբերող այս գրքույկը քաղված է Վ. Դևրիկյանի «Սրբալույս մյուռոնը հայ մատենագրության մեջ» ստվարածավալ երկասիրության նախաբանից: Դևրիկյանը պետք է հանրամատչելի մի գրքույկ պատրաստեր այս առիթով, բայց նրա անժամանակ մահը կիսատ թողեց սկսյալ գործը: Այդ նախաբանը որոշ կրճատումներով, վերափոխություններով ու հավելումներով ներկայացված է ընթերցողին՝ հանրամատչելի և փոքրածավալ ձևաչափով բացահայտելով հայոց պաշտամունքային սրբությունների շարքում նախադաս և խորհրդավոր համարում ունեցող մյուռոնի խորին խորհուրդը:

12. «Սրբալույս մյուռոն»: Մյուռոնօրհնության համառոտ բովանդակությամբ թերթոն է (զուգադիր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն): Նախատեսված է հայ և օտար հավատացյալների համար:

13. «Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա տարեգրության ծալքերում», երկրորդ՝ լրամշակված հրատ. (հեղինակներ՝ Ա. Բոզոյան, Ա. Եղիազարյան, Գ. Թանանյան, Ա. Հակոբյան, Ա. Հարությունյան, Գ. Հարությունյան, Ա. Ղամբարյան, Ա. Մանասյան, Հ. Մարության, Ն. Միրզոյան, Ա. Մովսիսյան, Տ. Սիմոնյան, Ա. Վաղարշյան, խմբագիրներ՝ Գ. Հարությունյան, Տ. Արարատ քհն. Պողոսյան, Ս. Մելքոնյան):

Ժողովածուն ներկայացնում է հայկական հնագույն թագավորություններից (սկսած Ք. ա. 3-րդ հազարամյակից) մինչև մեր ժամանակների հանրային հարաբերությունների զարգացման տարբեր ենթափուլերն ու առանձնահատկությունները, աշխարհաժողովների, ազգային-եկեղեցական ժողովների, դրանց ընդունած կանոնական սահմանադրությունների իրավագիտական դերն ու նշանակությունը: Համակողմանի վերլուծությամբ ներկայացվում են ազգային-եկեղեցական ժողովները, «Կանոնագիրք հայոց»-ը, առանձին հեղինակների իրավագիտական երկերը, լեհահայոց և Աստրախանի հայոց դատաստանագրքերը, Շահամիրյանների «Որոգայթ փառաց»-ը, արևմտահայոց ազգային սահմանադրությունը: Անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետությունում (1918–1920 թթ.) սահմանադրության ստեղծմանն ուղղված ջանքերին, ինչպես նաև՝ Արցախյան շարժման նախօրեին և ընթացքում սահմանադրական պայքարի դրսևորումներին: Հատուկ ուշադրություն է դարձվում սահմանադրական մշակույթի արժեքանական համակարգում արդի մարտահրավերներին: Ժողովածուի նպատակն է՝ ինչպես հայ, այնպես էլ միջազգային լայն հանրությանը հաղորդակից դարձնել հայ իրավական և սահմանադրական մշակույթի ձևավորման ու զարգացման ողջ տարեգրությանը:

14. Տ. Մովսես վրդ. Սարգսյան, *Արդարացի պատերազմի տեսությունը*, Բ հրատ., խմբագիր՝ Տ. Արարատ քհն. Պողոսյան:

Արդարացի պատերազմի տեսությունը փիլիսոփայության, բարոյագիտության, տնտեսագիտության, քաղաքագիտության, միջազգային իրավունքի մի ասպարեզ է, որ ժամանակի հետ ավելի մեծ ազդեցություն է թողնում համաշխարհային քաղաքականության, պատերազմի ու խաղաղության որոշումների ընդունման վրա: Միաժամանակ այն հոգևոր, բարոյական օրենքների ու չափանիշների մի ամբողջ համակարգ է, և այս համատեքստում քրիստոնյաներին անհրաժեշտ են հստակ գիտելիքներ, թե ինչպիսին է մեր Եկեղեցու դիրքորոշումն այս ամենի նկատմամբ: Աշխատության հեղինակը քննության է ենթարկում արդարացի պատերազմի ուսմունքը՝ բանաձևելու պատերազմի բարոյական արդարացման հիմնավորումները, դիտարկում ռազմի բարոյագիտության երեք հիմնական ուղղությունները՝ խաղաղապաշտություն, զորապաշտություն, իրապաշտություն՝ յուրաքանչյուրի դեպքում վկայակոչելով պատմական իրադարձություններ, դրանց հետ կապված նշանավոր հեղինակների ու եկեղեցական հայրերի տեսակետներն ու հիմնավորումները՝ հավելելով դրանց իր իրավական, քաղաքական, կրոնական, բարոյական անկողմնակալ վերլուծությունները:

15. Տ. Մեսրոպ վրդ. Պարսամյան, *Լինել Աստված. Մարդու աստվածացման եռաստիճան ճանապարհն ըստ Սուրբ Ներսես Շնորհալու վարդապետության*, Բ հրատ., խմբագիր՝ Շահե ծ. վրդ. Անանյան:

Գիրքը ներկայացնում է Ս. Ներսես Շնորհալու հայացքների ամբողջական վերլուծությունը քրիստոնեական վարդապետության ամենակարևոր դրույթներից մեկի՝ աստվածացման վերաբերյալ: Գրքում համադրվում և վերլուծվում են ինչպես ընդհանրական, այնպես էլ Հայ Եկեղեցու հայրերի ու վարդապետների բոլոր տեսակետները քրիստոնեական վարդապետության այս կարևորագույն դրսևորման վերաբերյալ:

16. «Օրացույց. 2024» պաշտոնական, կազմող՝ Տ. Միքայել արք. Աջապահյան:

Ներկայացնում է տարվա ծիսատոնական համակարգը՝ ներառելով եկեղեցական բոլոր տոները, սրբոց հիշատակության օրերը: Բացի այդ՝ ընդգրկում է տեղեկություններ Ամենայն Հայոց Կաթողիկոսության միաբանների, տարբեր խորհուրդների և հանձնաժողովների անդամների, ինչպես նաև Մայր Աթոռի պաշտոնեության մասին:

17. «Սեղանի օրացույց. 2024»:

Ներկայացնում է տարվա ծիսատոնական համակարգը՝ ընդգրկելով եկեղեցական բոլոր տոները, սրբոց հիշատակության օրերը և սրբերի համառոտ վարքը:

Պատրաստեց
Տ. Արարատ քհն. ՊՈՂՈՍՅԱՆԸ
Ս. Էջմիածնի մատենադարանի
և հրատարակչության տնօրեն

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Աստուծոյ օրէնքներուն եւ պատուիրաններուն մասին

Սկիզբը՝ թիւ 9–18, 20

Առաջին հարցում. *իմացի՛ր, թէ մարդու փրկութեան համար երեք անհրաժեշտ եւ կարեւոր բան կայ*:

Առաջին. հաւատալիքներու գիտութիւնը, որ *«Հաւատամք ի մի Աստուած»ը* կը սորվեցնէ մեզի:

Երկրորդ. յուսացած բաներու գիտութիւնը, որ Տէրունական՝ *«Հայր մեր»* աղօթքը կը սորվեցնէ մեզի:

Երրորդ. մեր ըրած գործերուն գիտութիւնը, որ աստուածային սուրբ օրէնքներուն մէջ կայ:

Որովհետեւ օրէնքը չորս կերպ է.

ա. բնական,

բ. բանական,

գ. մովսիսական,

դ. աւետարանական:

Բնական օրէնքը բնածին այն լոյսն է, որ Աստուած մարդու միտքին մէջ ծագեցուցած է, որով կ'իմանայ, թէ ինչ պիտի գործէ եւ ի՞նչ բաներէ պէտք է զգուշանայ, խորշի: Տակաւին, մարդը այս լոյսով կը ճանչնայ զԱստուած՝ որպէս իր սիրած բոլոր բաներէն գեր ի վեր, [կը գիտակցի, որ] ուրիշներուն [պէտք չէ] վնասէ, ընդհակառակը [պէտք է] օգտակար ըլլայ: Մեր նախածնողներուն մէջ եղած այս օրէնքը սատանան ցանկութեամբ ապականեց, որով անոնց հոգին Աստուծոյ հակառակեցուց, իսկ մարմինները՝ հոգիին: Այս օրէնքը մեղքերու օրէնք կոչուեցաւ: Այդ պատճառով մարդու հոգին շատ յաճախ կը ջանայ բարին գործել, սակայն մարմինը կը հակառակի:

Հետեւաբար՝ երբ Աստուած տեսաւ, թէ առաջին օրէնքը ապականեցաւ, Աբրահամի ժամանակ երկրորդ օրէնքը տուաւ, որ բանական օրէնք կը կոչուի, որովհետեւ այդ ժամանակ կռապաշտութիւնը շատցած էր, ուստի կռապաշտութիւնը խափանելու համար բանական օրէնքը տուաւ, որպէսզի թերեւս հաւաքաբանութեամբ եւ բանական քննութեամբ մարդիկ զԱստուած ճանչնային. այս օրէնքն ալ սատանան ապականեց, որ մարդոց թոյլ չտուաւ Աստուծոյ իմաստութեամբ իմաստութիւնը Տուողը ճանչնան:

Սատանային որոգայթը խափանելու համար Մովսէսի ժամանակ երրորդ օրէնքը տուաւ, որ գրաւոր կամ մովսիսական օրէնք կը կոչուի. ահացուցիչ եւ երկիւղալի. քանի որ մովսիսական օրէնքը ամպով, որոտումով, ծուխով, մառախուղով եւ փողով տրուեցաւ: Օրէնքը, արդարեւ, երկիւղ կը պատճառէ՝ կարգի մէջ պահելու ձեռքը եւ ո՛չ թէ սիրտը, հետեւաբար անկատար է, սակայն բոլոր անկատարները կատարեալին կը վերաբերին, որով մարդ կարօտ եղաւ ուրիշ օրէնքի մը: Այդ պատճառով հին, ծանր ու բազմապատիկ օրէնքներուն փոխարէն Աստուած տուաւ չորրորդ՝ աւետարանական օրէնքը. թեթեւ, հեշտալի, դիւրին եւ համառօտ, որ կը կայանայ զԱստուած եւ ընկերը սիրելուն մէջ: Այս օրէնքի պարագային ո՛չ ոք կրնայ պատճառաբանել ու արդարացում փնտռել, թէ ծանր է, շատ խրթին ու դժուար է, որովհետեւ այս օրէնքներուն Քրիստոսի կողմէ Ս. Հոգին ու Անոր եօթը պարգեւները որպէս օգնական տրուեցան մարդուն, քանի որ Ս. Հոգիին տրուելով՝ սէրն ալ տրուեցաւ: Ս. Պօղոս առաքեալը կ'ըսէ, թէ Աստուծոյ սէրը սփռուած է Ս. Հոգիին միջոցով, որ տրուեցաւ մեզի:

Տասնաբանեայ օրէնքները, կը նկատենք, երկու բաներու կը վերաբերին. զԱստուած եւ ընկերը սիրելուն: Այդ պատճառով Քրիստոս ըսաւ, թէ այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ օրէնքն ու մարգարէները:

Հետեւաբար նախ պէտք է Տասնաբանեայ օրէնքներուն մասին խօսինք եւ ապա՝ աւետարանական օրէնքներուն:

Եթէ օրէնքներով պատսպարուիս, դուն ամուր դղեակ մը կ'ըլլաս,

իսկ եթէ օրէնքները ոյժով խզես, արտաքսուելով կը կորսուիս:

Երկրորդ հարցում. *մովսիսական օրէնքի առաջին հրամանի մասին:*

Առաջին օրէնքն ու պատուիրանը այս է. Ինձմէ զատ ուրիշ աստուածներ չըլլան քեզի համար: Դուն քեզի կուռքեր մի՛ շիներ որեւէ մէկ բանի նմանութեամբ, ո՛չ երկինքի մէջ, ո՛չ երկրի վրայ եւ ո՛չ ալ ջուրերու մէջ եղող: Մի՛ երկրպագեր անոնց ու մի՛ պաշտեր զանոնք, որովհետեւ Ես եմ քու նախանձոտ Տէր Աստուածդ, որ հայրերուն մեղքերը որդիներուն եւ զիս ատողներուն երրորդ ու չորրորդ սերունդներուն կը հատուցեմ. ու զիս սիրողներուն եւ Իմ հրամաններս պահողներուն, կատարողներուն կ'ողորմիմ մինչեւ հազարերորդ սերունդը:

Արդ, այս պատուիրանը բազմաթիւ խնդիրներ կը պարունակէ: Նախ եւ առաջ որ կ'ըսէ, թէ Ինձմէ զատ՝ ուրիշ աստուածներ չըլլան քեզի: Կ'ուզէ ըսել, թէ միմիայն Աստուած է գերազանց Բարի, միտքերուն համար անըմբռնելի եւ միայն հաւատքով ճանաչելի: Որովհետեւ բոլոր հեթանոսները, ըստ իրենց զանազանութեան, զանազան ստեղծուածներ կը պաշտէին, դեւերու խրատին համաձայն, Աստուծոյ ծայրագոյն պատիւը յափշտակելով: Տակաւին, ան որ զԱստուած՝ մէկ կը ճանչնայ, մեծապէս կը մոլորի՝ Անոր պատիւը ուրիշներուն տալով, քանի որ ծայրագոյն պատիւը միայն ծայրագոյն բարիին կը վայելէ: Այդ պատճառով Աստուած ըսաւ, թէ պիտի սիրես քու Տէր Աստուածդ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ եւ ամբողջ զօրութեամբդ: Աստուած այս մէկը պնդելով՝ Դաւիթ մարգարէին բերանով ըսաւ, թէ՝ ժամանակաւոր աստուածներ թող չունենաս եւ դուն օտար աստուածներու մի՛ երկրպագեր:

Երկրորդ խնդիրը այն է, որ կ'ըսէ, թէ դուն քեզի կուռքեր մի՛ շիներ որեւէ մէկ բանի նմանութեամբ, ո՛չ երկինքի մէջ, ո՛չ երկրի վրայ եւ ո՛չ ալ ջուրերու մէջ եղող: Արդ, կուռքը քարէ կամ փայտէ փորուած է, կոփուած է. իսկ ձուլածոն՝ ոսկիէ, արծաթէ կամ այլ հալած նիւթերէ է: Բոլոր իրերու պատճառը լաւագոյնն է, քան իր պատճառելին: Արդարեւ, բոլորին պատճառը Աստուած է, բոլորին մէջ Աննմանը: Հետեւաբար՝ Աննմանին նմանութիւնն ու պատկերը շինելը եւ զայն աստուած կոչելը կռապաշտութիւն է: Որովհետեւ հեթանոսները, որ պատկեր կը շինէին, չէին ըսեր, թէ ասիկա Աստուծոյ նմանութիւնն է, եւ զայս որպէս Աստուծոյ նմանութիւն կը պաշտենք՝ ի պատիւ Աստուծոյ, այլ՝ իրենց շինած այդ պատկերները կ'ըսէին, թէ աստուած են, որով Աստուծոյ պատիւը կը գողնային ու այդ պատկերներուն կու տային:

Այդ պատճառով մենք՝ քրիստոնեաներս, որ պատկեր կը նկարենք, չենք ըսեր, թէ Աստուած է, այլ՝ նշան մը, որով մեր միտքը կը բարձրացնենք այդ պատկերի նախատիպին: Իսկ այն, որ կ'ըսէ, թէ՝ ինչ որ երկինքին մէջ, ատով կ'արգիլէ մեզի հրեշտակներուն երկրպագութիւն ընելը, որոնք այս երեւելի երկինքէն վեր են: Իսկ այն, որ կ'ըսէ, թէ՝ ինչ որ երկրի վրայ, ըսել կ'ուզէ ո՛չ մարդու կամ եզի եւ այլն, քանի որ մահկանացու ստեղծուածներ են, որոնց անմահ Աստուծոյ նման պատիւ չի՛ վայելեր: Իսկ ան, որ կ'ըսէ, թէ՝ ինչ որ ջուրերուն մէջ, այսինքն՝ մեծամեծ ձուկերուն:

Երրորդ խնդիրը այն է, թէ՝ Մի՛ երկրպագեր անոնց ու մի՛ պաշտեր զանոնք:

Երկրպագանել կը նշանակէ խոնարհիլ, ծնրադրել եւ գետինը համբուրել այդ կուռքերուն առջեւ: Երբ Աբրահամ Նահապետը Աստուծոյ երկրպագեց, ինքզինքը հող ու մոխիր կոչեց Աստուծոյ առջեւ: Ով որ կուռքերուն կ'երկրպագէ, կ'ուզէ ըսել, թէ ես հող ու մոխիր եմ քու առջեւդ: Սակայն ասիկա մեծ սխալ մըն է, որովհետեւ այդ կուռքերն ալ հող ու մոխիր են, իսկ այդ կուռքերը պաշտողները այդ կուռքերէն աւելի լաւ են, քանի որ կենդանի եւ բանական են, իսկ անոնք՝ անկենդան եւ անբան. զանոնք հոգեւոր սիրով մի՛ պաշտեր, կ'ըսէ:

Չորրորդ խնդիրը պատիժներու սպառնալիքներն ու խոստումներու վարձքերն են:

Ես նախանձոտ Աստուած եմ, կ'ըսէ, որ հայրերուն, զիս ատողներուն մեղքը եւ ատոնց պատիժը մինչեւ երրորդ ու չորրորդ սերունդ կը հատուցեմ. իսկ ողորմութիւնս զիս սիրողներուն համար կը պահեմ մինչեւ հազարերորդ սերունդ:

Այս խօսքերով Աստուծոյ անաչառ արդարութիւնը եւ անչափ ողորմութիւնը կ'երեւի, որ եթէ մարդ արդարութենէն չերկնչի, ողորմութենէն չպատկառի, եթէ բռնութեամբ չքաշուի, գոնէ Աստուծոյ սիրով եւ ողորմութեամբ զմայլի: Աստուծոյ արդարութիւնը յայտնի կ'ըլլայ մինչեւ չորրորդ սերունդը պատժելով, իսկ ողորմութիւնը՝ մինչեւ հազարերորդ սերունդը:

Այս եւս իմացի՛ր, թէ այս ժամանակներու հրեաները ծածուկ կռապաշտներ են, քանի որ Քրիստոսի փոխարէն Նեռին կը սպասեն, ու անոնց յոյսը այդ պիղծն է: Սակայն Աստուած կ'ըսէ, թէ անիծեալ է ան, որ իր յոյսը մարդու վրայ կը դնէ: Իսկ անոնք [հրեաները] այնպիսի մարդու մը վրայ դրած են իրենց յոյսը, որ ամէն տեսակի չարիքներով լեցուն է, ու աշխարհի բոլոր չարիքները կարելի է անոր մէջ գտնել:

Այդ պատճառով Աստուած Իր ողորմութիւնը չպահեց անոնց վրայ մինչեւ հազարերորդ սերունդը, քանի որ ատելի եղան Աստուծոյ՝ Քրիստոսի գալուստին չհաւատալով:

Քրիստոնեաներուն մէջ ալ երեք տեսակի կռապաշտներ կան: Հրեաներուն արգիլուած էր երեք ստեղծուածներու երկրպագել:

Առաջինը՝ երկինքի մէջ եղող բաներուն. Հպարտը, կամենալով բոլոր մարդոցմէ վեր ըլլալ, կռապաշտ եղաւ:

Երկրորդը՝ երկրաւոր ստեղծուածներուն. Ագահը, երկրաւոր ստեղծուածներու՝ ոսկիի ու արծաթի նմանութիւնը սիրելով, կռապաշտ եղաւ:

Երրորդ՝ ջրեղէն ստեղծուածներուն. հեշտասէրներն ու բղջախոհները, իրենց ցանկութիւնները սիրելով, կռապաշտ եղան:

➥ էջ 7, 8

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Տաթևի «Ճոճվող սյուն» հուշարձանը

«...Կանգնէ և մերձ եկեղեցւոյն՝ հանդէպ դրանն հարաւոյ սիւն մի զարմանալի յանուն Սրբոյ Երրորդութեան ի մանր քարանց պատուաձեալ ի չափ երեսուն կանգնոյ...»:

Ստեփանոս Օրբէլեան, «Պատմութիւն նահանգին Սիսական»

Տաթևի վանական համալիրի առինքնող, տպավորիչ կոթողներից է Սուրբ Երրորդությանը նվիրված «Ճոճվող սյուն» կամ «Ճոճվող գավազան» անունով հայտնի հուշարձանը: Այն, հիրավի, եղել և մնում է հայ միջնադարյան ճարտարապետության հրաշալիքներից մեկը: «Ճոճվող սյունը» կամ «Ճոճվող գավազանը» շնորհաշատ հայ ճարտարապետի հանճարեղ մտքի ու վարպետության արգասիքն է, որը կարողացել է սյունը դնել ավազե կողեր ունեցող ծխնիավոր հենարանի՝ հոդակապային հանգույցով հիմքի վրա, ստեղծել շարժուն կառույց, ծանրության կենտրոնը հնարամտորեն տեղափոխել է սյան ստորին մասը՝ ստիպելով նրան ճոճվել: Հանճարամիտ ոսկեձեռիկ ճարտարապետը սյունը կառուցել է այն նպատակով, որ այն, թեքվելով ցանկացած կողմի վրա, ճոճվի, ապա կրկին վերադառնա իր նախնական՝ ուղղահայաց դիրքին, կանգուն ու անվնաս մնա: Հանուն Սուրբ Երրորդության կանգնեցված կոթողն իր այս հատկությամբ կարծես թե խորհրդանշում է աստվածային սիրո հավիտենականությունը: Տաթևի ճոճվող հրաշալիքն ունի 8,3 մ բարձրություն, քարաշարվածքն ամրացված է կրաշաղախով: Բնական ու արհեստական բազմաթիվ արհավիրքներին դիմակայած հուշարձանը մեզ է հասել կիսախարխուլ, սակայն ամբողջական ու կանգուն վիճակում: Կոթողի երկաստիճան խարիսխը բաղկացած է երկու վիթխարի, միակտոր բազալտից. ստորինը քառակուսաձև է՝ վերին մասում անկյունային թեք հատումով, փոխակերպվում է ութանիստի, որի վրա էլ նստում է խարսխի՝ ավելի համեստ չափերով երկրորդ ութանիստ աստիճանը: Վերջինիս վրա ամրացված սյան ութանիստ բունը միջնամասում երկատվում է՝ պարանահյուս զույգ գոտիով սյունը բաժանելով երկու ուղղաձիգ մասի: Վերնամասում սյունը պսակված է ութանիստ քանդակազարդ խոյակով, որի վրայի քանդակազարդ պատվանդանի վրա բարձրանում է ցանցկեն, երկկողմանի մշակված և շրջանակի մեջ առնված թևավոր խաչը: Սյան իրանի որոշ հատվածներ զարդարված են տարբեր ժամանակներում կերտված վարդյակներով ու խաչերով, իսկ հարավային նիստին՝ հավքի պատկերից ներքև, փորագրված է արևային ժամացույց: 19-րդ դ. վերջերին ճոճվող քարակոթողը շրջափակվել է քարից ու մետաղից պատրաստված ցանկապատով:

1931 թ. ապրիլի 27-ի Զանգեզուրի ավերիչ երկրաշարժից մեծապես տուժում է Տաթևի վանական համալիրը, ավերվում, վնասվում է կառույցների մեծ մասը, սակայն Տաթևի «Ճոճվող սյունը» կամ «Ճոճվող գավազանը» վնասվում է մասնակիորեն՝ միայն միջնագոտուց ներքև ընկած հատվածը: Գյուղի դարբինը, զգալով սյան քանդվելու վտանգը, մետաղական օղակաձև կապերով ձգել, ամրացրել է այն, ինչի շնորհիվ էլ այսօր ճոճվող սյունը կանգուն է: Եթե այս «վիրակապային» միջոցառումները ժամանակին չիրականացվեին, սյունը թեթև ցնցումից կարող էր քանդվել: Հավելենք, որ այդ փրկիչ օղակներով հանդերձ՝ հրաշակերտ քարակոթողն այսօր գտնվում է խիստ վտանգված վիճակում:

Տաթևի վանական համալիրի մարգարտի՝ ճոճվող կոթողի կառուցման նպատակի մասին մի քանի տարբերակներ են պատմում: Մարդկանց շատ է հետաքրքրել Տաթևի ճոճվող սյան առեղծվածը: Մեզ հասած մի գեղեցիկ ավանդության համաձայն՝ Տաթևի համալսարանի սաներն ուսումնառության շրջանն ավարտելուց և վարդապետական ավարտաճառը պաշտպանելուց հետո, երբ վարդապետի կոչում և վարդապետական գավազան պետք է ստանային՝ որպես հոգևոր իշխանության շնորհ, հերթով մոտենում էին պատշգամբին, աջ ձեռքով հպվում «Ճոճվող գավազանին»: Եթե գավազանին դիպչելիս այն ճոճվում էր, ուրեմն դիպչողն արժանավոր էր, և միայն դրանից հետո էր թեկնածուն ստանում իր հայցած վարդապետական կոչումն ու գավազանը:

Ըստ հաջորդ վարկածի՝ Տաթևի կոթողը կառուցվել է, որ երկրակեղևի չնչին տատանումներից կամ քառասմբակ արշավող ասպատակիչների ձիերի դոփյունից սասանվի ու այդպիսով նախազգուշացնի՝ գուժելով մոտալուտ արհավիրքի մասին:

Կոթողի կառուցման նպատակի մյուս տարբերակի համաձայն՝ այն կառուցվել էր պաշտպանական նկատառումներից ելնելով: Ըստ ավանդության՝ Արաքս գետն անցած ու Սյունիք ներխուժած Լենկ Թեմուրը կամեցել է հիմնահատակ կործանել Տաթևի վանքը և տապալել հրաշակերտ ճոճվող սյունը: Դաժան զորապետը հրամայում է իր հրոսակներին տասը զույգ գոմեշ լծել, գութանի շղթայով կապել սյունը և ձգել: Հենց որ գոմեշներն սկսում են ձգել, շղթան կտրվում է, և ամեհի գոմեշները տապալվում են ձորը՝ իրենց հետ անդունդը տանելով նաև մեծաթիվ հրոսակների: Տեսարանը մահու չափ սարսափեցնում է ապշահար Լենկ Թեմուրին ու իր հրոսակներին, որոնք ճոճվող գավազանը համարելով «սատանայի աշտարակ» կամ «արդար հատուցման պատժիչ գավազան»՝ իսկույն ճողոպրում են Տաթևից:

Արման ՄԱԼՈՅԱՆ, պ. գ. թ.

Գրիգոր Նարեկացին և 20-րդ դարի հայ գրականությունը

Սկիզբը՝ նախորդ համարում

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ոչ միայն իր մեջ կրում է նարեկացիական ոգին, քանզի նրա ամբողջ ստեղծագործության մեջ անցնում է մարդու կատարելագործման հիմնահարցը, այլև տարբեր առիթներով իր գնահատող խոսքն է ասել նրա մասին: 1910-ին *«Ամենքը միասին»* հոդվածում խոսելով Աբովյանի արձանի մասին՝ Թումանյանը շարունակում է. «Սրա նման մի կոթող էլ կա, որ թերևս մի օր հայությունը բարձրացնի Վանա ծովի ափերին՝ Նարեկա ժայռերի վրա, որ նա էլ երկնքին պատմի, «ի խորոց սրտի» Աստծու հետ խոսի ու դեպի վեր ուղղի «Զայն հառաչանաց հեծության սրտի ողբոց աղաղակի»... Եվ կատարյալ կլինի: Թող լսեն և՛ երկնքը, և՛ երկիրը: Եվ պետք է լսեն, որովհետև այստեղ արդեն հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»:

Թումանյանի՝ «Դեռ հեռու է մինչև Մարդը իր ճամփան» դրույթն ըստ էության կատարելության որոնման նարեկացիական գաղափարն է նոր ժամանակներում: Տարբերությունն այն է, որ Նարեկացին Աստծուն էր որոնում Մարդու մաքրագործման միջոցով, իսկ Թումանյանը Մարդուն էր որոնում Աստծու կերպարանքով: Այս փիլիսոփայական ուղղվածությունը բնորոշ է Թումանյանի ամբողջ ստեղծագործությանը, որ լավագույն ձևով արտահայտվել է *«Անուշ»*, *«Հազարան բլբուլը»*, *«Թմկաբերդի առումը»* պոեմներում, *«Ախթամար»*, *«Փարվանա» բալլադներում*, *«Վայրէջք»*, *«Տիեզերքի ընթերցումը»*, *«Սիրիուսի հրաժեշտը»* բանաստեղծություններում և մի շարք քառյակներում՝ *«Բերանն արնոտ Մարդակերը էն անբան...»*, *«Արևելքի եդեմներին իջավ պայծառ իրիկուն...»*, *«Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր...»*, *«Աստեղային երազների աշխարհքներում լուսակաթ...»*, *«Ասի. «Հենց լոկ էս աճյունն է ու անունը, որ ունեմ...»»*, *«Ո՜վ անճառ Մին, որ ամենին միացնում ես մի կյանքում...»*, *«Աստծու բանտն են տաճարները — աշխարհքներում բովանդակ...»*, *«Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին...»*:

Ավելացնենք, որ այս որոնումը խորացավ *«Հազարան բլբուլը»* պոեմում, որի մեջ բանահյուսական նյութի միջոցով Թումանյանը փորձում է վերջնական կերպավորում հաղորդել մարդու որոնման իր հիմնադրույթին: Այդ գործը թեև մնաց անավարտ, բայց մտահղացումն ու պահպանված էջերը արդեն իսկ հուշում են, որ աղետավոր աշխարհի փրկությունը Թումանյանը տեսնում էր կատարյալ ներդաշնակության հասած հերոսի կերպարի ստեղծման մեջ: Իսկ այդ հերոսն անպայման պետք է կրեր աստվածային գծեր:

Հիշյալ գործերի մեջ նարեկացիական ոգին թումանյանական ձև ու բովանդակություն է ստացել և իրենով ստեղծել նոր ավանդույթ:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ համար Նարեկացին եղել է «լուսապսակ ճակատ», միջնադարյան դպրության պետ, ազգային բարձրագույն հանճարի խորհրդանշան: Նարեկը եղել է նրա սեղանի գիրքը: Հիմա էլ Չարենցի տուն-թանգարանում պահվում է Նարեկի հնագույն մի հրատարակություն (Վենետիկ, Ս. Ղազար, 1851)՝ բազմաթիվ նշումների հետքերը վրան: Նարեկացին տևական ներկայություն է ունեցել Չարենցի ստեղծագործական կյանքում, ինչն ավելի խորացավ հատկապես «Գիրք ճանապարհի»-ի գրության ժամանակ և հետո:

Մինչ այդ իր «Էպիքական լուսաբաց»-ը 1930 թ. հունվարի 5-ին ընծայագրել էր Ա. Բակունցին՝ «Սիրելի Ակսելին, միակ բարեկամիս», *«Մատյան ...»*-ից վերցված այսպիսի ուղերձով. «Մի՛ եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս՝ // Իբրև ապաջան սերմանող անբերրի երկրի»:

Նարեկացու ոգին նախ՝ առարկայացավ Չարենցի բառապաշարի ու մակդիրակիր բառապատկերների մեջ: Դա լավագույն ձևով արտահայտվեց *«Մահվան տեսիլ»* (1933) և թերի պահպանված *«Կոմիտաս»* (1935) պոեմների մեջ: Ահա օրինակներ «*Մահվան տեսիլ*»-ից. *արեգակնական հանճար, հանճարափայլ պարգև, զարհուրյալ հայացք, ժանգաժանգ, անփայլ և գոսնական տեսիլ, դառնաղետ նվագ, արյունռուշտ դեմք, ռազմաճիչ երգեր, դիվահար ամբոխներ: «Կոմիտաս»* պոեմում դա նկատելի է պատկերների մեջ.

Լռությունն ահռելի է, որպես մարմարե անշարժ մի խաչքար
<...>
Քայլում է մեռյալ դաշտերի և մեռյալ ձայների Մարգարեն.
Քայլերով ահեղ, լայնաձիգ՝ լռության մտրակով քշված,
Հայացքները որպես բևեռներ՝ խրելով հեռուն այն քարե՝
Դաշտերի Հիսուսի նման՝ նրա մեջ մանկությա՛ն պես նշված:
<...> Լռության դագաղի առջև իբրև քարացած մի Հիսուս,—
Մահախաչ քարացավ մի պահ...

Ժխտելով այն ամենը, ինչ անցյալինն է, անցյալի մեջ գնահատելով հանդերձ միջնադարի մեծերին՝ այնուամենայնիվ զարմանալի մի անցումով Չարենցը հենց նրանց է ուղղում այպիսի խոսքեր.

Օ՜, մռայլախոս դպիրներ սև՛,—
Դո՛ւ, Շնորհալի, և՛ դո՛ւ, Նարեկ,
Դո՛ւք — մագաղաթյա և հանճարեղ,
Դո՛ւք — զարհուրելի, ինչպես Դարեհ,
Դո՛ւք — պատան մտքի, դո՛ւք —անարև,







Որ սրտի համար դարեր, դարեր
Կերտել եք դագաղ-պատյան քարե,—
Եվ ոգու համար — դժնյա տառեր:

Չարենցն այստեղ գեղջուկ երգը, ռամիկ հանգը հակադրում է հոգևոր երգին և ժամանակի պահանջներից ելնելով՝ նախապատվությունը տալիս առաջինին: Աշխարհիկ գրականությունը բարձրացնելու և հոգևոր-եկեղեցականը քննադատելու՝ ժամանակին շատ սուր բնույթ ընդունած պայքարը Չարենցի ստեղծագործության մեջ արտահայտվել է այդպես, թեև նույն ժամանակի մեջ նրան քննադատեցին միջնադարյան բառապաշար, անգամ՝ «դպրություն» բառը օգտագործելու համար: Առաջանում է յուրահատուկ մի հակադրություն. Չարենցը ժխտում է միջնադարը՝ օգտագործելով միջնադարյան բառագանձ, բանաստեղծական ձևեր ու հնարքներ:

Արդյո՞ք այդ ժխտումը Չարենցի էությունն էր: Ստեղծագործական հետագա քայլերը գալիս են բարձրագոչ աղաղակելու՝ ո՛չ: Դրա արտահայտությունն առաջին հերթին Նարեկացու *«Մատյան...»*-ի գլուխների վերնագրով հայտնի *«Ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծո»* տետրապտիքոսն է, այսինքն՝ չորս սոնետից կազմված քառամաս բանաստեղծությունների շարքը: Շարքը Չարենցը գրել է 1936 թ. դեկտեմբերի 6—8-ին՝ իր համար ահավոր ծանր ու դժոխային օրերին, երբ տնային կալանքի մեջ նրան ենթարկել էին գրական, հանրային ու մարդկային արժանապատվությունը վիրավորող մահացու հարցաքննության և ըստ էության վերջնականապես օտարել քաղաքացիական կյանքից, որի վերջը բանտն էր կամ գնդակահարությունը: Չարենցը նախ Նարեկացու պես խոսքն ուղղում է Արարչին և պարզ ու որոշ հայտարարում, որ Այգաբացը դարձել է արյունալիճ Մայրամուտ, և որ հեղափոխության ըղձյալ գաղափարները գլխատվում են: Ահա տետրապտիքոսի առաջին սոնետը.

Ինչպես դարեր առաջ — վկան Նարեկացի,—
Քեզ եմ հղում ես ողբըս, ո՛վ Արարիչ,
Ես՝ մեղսավոր քերթողըս աստվածարյալ դարի,—
Ողջակիզյալ արյունս վարակածին...

Վաղ աղջամուղջն այնքան ըղձյալ Այգաբացի
Մայրամուտի փոխվեց արյունալիճ,—
Ուր մեր Արևն է նոր սուզվում արյունալի,
Որպես կարմիր գլուխ գլխատվածի...

Բորբ աչքերում սակայն հավատացյալ բյուրոց
Ծովածավալ արյան ցոլքը շառայլածին —
Ցոլանում է իբրև ցոլք ցնծության մերոս:—
Եվ — արեգակն է հին վերադառնում դարձյալ
Արևմուտքից՝ ինչպես մահվան նաշից հառնած
Ղազարեի նման — արևը ետ դառնա...

Այս ոգին, Արարիչին դիմելու այս պաղատանքը՝ «Ինչպես վկան մեր հին՝ Նարեկացին», Չարենցը շարունակում է նաև մյուս գործերի մեջ: Երկնային հավատի առջև Չարենցն ստեղծում է իր նյութեղեն, երկրային կերպարը՝ որպես մի նոր վկա: Ուրեմն՝ Նարեկացին հանդես է գալիս որպես «հին վկա»՝ ձայնը Աստծուն ուղղած, իսկ ինքը՝ «նոր վկա», որի ուղեկիցն են նյութն ու երկրային հավատը: Երկնային Աստծու դիմաց երկրային աստվածը՝ Մարդը.

Իբրև մի նո՛ր վկա՝ վաղո՛ւց աստվածարյալ՝
Ես՝ երկրայի՛ն՝ երկրի՛ն լոկ հավատացի,—
Չկամեցա՛, Աստված — ես՝ ինձանից բացի,—
Ոչ գոյությունն՝ ինձ պես գեթ կատարյալ:

Ես անսացի միայն իմ հանճարի ձայնին:—
Ճանաչեցի լոկ նյո՛ւթն՝ ինքնարարիչ,—
Եվ՝ հանճարիս ուժով՝ ենթարկեցի այն ինձ:
Եվ այսքանից հետո ահա նրա ճակատագիրը.
Եվ — թունավոր ինքյան, որպես կարիճ՝
Ահա կանգնած եմ — զուրկ անգամ դժնի՛ հացից,—
Եվ կախված է գլխիս — մի արեգնացյալ Կացին.—

Հաջորդ սոնետում Չարենցն արդեն խոսում է իր երկրային հավատի կորստի մասին: Հիմա արդեն միակը, որին, ինչպես Նարեկացին կարող էր դիմել, Տերն է.

...Ես ո՞ւմ դիմեմ, ո՛վ Տեր,— արդ՝ քեզանից բացի:

Ինչո՞ւ այսպես անօգ ես մնացի,
Եվ այնքան բորբ՝ հանկարծ անվերադարձ հանգավ,—
Անդրդվելի հավատս՝ դեպի գալի՛քն անգամ,
Եվ ինձ գերող ներկան — դարձավ անծիր:

Եվ ներբողներս՝ հղած ծագող այգաբացին,—
Արեգակի՛ն՝ և՛ իմ, և՛ իմ արյամբ առկայծ,—
Ողբ ու տրտունջ դարձան և փոխվեցին լացի:
Կյանքն եմ մեռած արդյոք ոգեկոչում դարձյալ,—
Երազելով, որ այն վերադառնա՝
Ղազարոսի նման՝ մահվան նաշից հառնած:

Հավատի կորստի տողերն ունեն նաև այսպիսի տարբերակներ. «Եվ անսասան հավատն իմ — անվերադարձ հանգավ // Անդրդվելի հավատն իմ հանդեպ արյամբ անգամ // Եվ ոչ խոսքով միայն ներբողածի»:

Հիշենք, որ Ղազարոսի հարության մասին տաղեր էր գրում նաև Նարեկացին: Նոր մահացած և թաղված Ղազարոսին Քրիստոսը հարություն է տալիս. «Ղազարէ, արի ե՛կ արտաքս» (Ավետարան ըստ Հովհաննու, ԺԱ: 44): Այդպես էլ մահվան տագնապների մեջ գտնվող բանաստեղծն էր մտածում, թե մեկը պիտի գա և ասի՝ Չարենց, դո՛ւրս արի նաշից: Չարենցն ամբողջությամբ տրվում է արարչական շնչին, ազատագրվում երկրայինից, նյութից, իր գովերգած հեղափոխությունից, որին, ահա, արյամբ է վճարում, վերամարմնավորվում որպես մի նոր Նարեկացի և փրկություն հայցում Արարչից: Դրա արտահայտությունն է ամբողջ 4-րդ սոնետը.

Քեզ եմ կանչում ես արդ, ինչպես Նարեկացին՝
Հղում եմ ողբըս Քեզ՝ սրտիս խորքից,—
Ինչպես շյուղն է հղում շունչն իր Նորքից —
Իբրև տեսիլք՝ հեռվում հառնած Արագածին...

Ինչպես դողդոջ մի շյուղ բարակածիլ՝
Մի երգեցիկ ցողուն — օվկիանում բերքի՝
Ես դաշտերում անծի՛ր իմ հրկիզյալ Երկրի,—
Արձագանք չեմ լսում իմ երգածի...

Բայց ես գիտեմ, որ դու՝ շնչով ստեղծարար,
Ինչպես անձրև վարար՝ անեզրական արտում,—
Ո՛չ մի մժեղ կամ շյուղ — չես թողնելու ծարավ...

Ես — երգեցիկ եղեգ, — ինչո՞ւ այսքան տրտում
Պիտի դողամ լույսիդ անեզրության հանդեպ,—
Երբ երբեք չես եղել դու այդքան նենգ...

Նարեկացին՝ որպես «անեղծ վկա», Չարենցին առաջնորդում է դեպի Արարիչ: Արարչամերժ (իր բառն է) բանաստեղծը դառնում է Արարչապաշտ. ոգին փրկվում է, բայց մարդը դատապարտված էր գամվելու ժամանակի և իրականության խաչափայտին: Չարենցը խաչվում է ոգեփրկության ճանապարհի հենց սկզբում:

Բանաստեղծության տարբերակներից մեկում Չարենցն իր ժամանակը համարում է «անհավատ դար», իրեն՝ «կարմրակեզ» երգիչ, Արարչի լույսին անգետ, որը, ահա, հավատի է գալիս, ինչը նախկինում համարել է սոսկ «նայիվ միֆ»: Ավելանում է նաև Անառակ որդու վերադարձի առակը. Չարենցը ներկայանում է հայրական տուն վերադարձող անառակ որդու կերպարանքով:

Նարեկացու ավանդույթը Չարենցի ստեղծագործության մեջ արթնացավ նաև իմաստավոր բաղաձայնույթի կիրառությամբ: Ինչպես ժողովրդական լալյաց երգերով Նարեկացին էր իր խոսքը դարձնում ավելի հուզիչ ու ներգործող, այդպես էլ իր ողբերգական ճակատագրի սրտահույզ ապրումները Չարենցն արտահայտեց *«մ»* և *«կ»* հնչյունների բաղաձայնույթով, որոնցից *«մ»*-ն մահն էր գուժում, իսկ *«կ»*-ն՝ կացինը, արեգնացյալ կացինը, որ կյանքի կեսօրին կարմիր հագած դահիճը կախել էր բանաստեղծի գլխին: Ահա նարեկյան ողբալիցքով *«Մայրամուտ»* տրիոլետը.

Մառ մորմոքում է մայրամուտը,
Մահվան մոխիր է մովից մաղում,—
Մեռնում է մութը մթնշաղում,—
Մառ մորմոքում է մայրամուտը:—
Մտորումներս մահ են, մութ են,
Մարխե մտքեր են միայն մխում,—
Եվ մորմոքում է Մայրամուտը,
Մահվան մրուր է մովից մաղում... ➥ էջ 7

Գրիգոր Նարեկացին և 20-րդ դարի...

➥ էջ 6

Չարենցն օրգանապես յուրացրել է Նարեկացու արվեստը: Իրավացի էր Պ. Սևակը, ըստ որի՝ Նարեկացու վարպետությունն ու գեղարվեստական արտահայտչականությունն «...Այնքա՛ն բացառիկ է, որ այն <...> ոչ միայն հայ գրականության մեջ ոչ ոքի կողմից չի գերազանցվել, այլև ոչ ոք, բացի Չարենցից, չի կարողացել անգամ մոտենալ նրան»: Դա, իրոք, այդպես է, և Չարենց–Նարեկացի կապն ավելի տարողունակ հետազոտության պահանջ ունի:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ստեղծագործության մեջ Նարեկացին ունի լիարժեք ներկայություն՝ սկսած գրական առաջին իսկ քայլերից: Խոսքը վերաբերում է *«Զղջում»* վերնագրված առաջին տպագիր բանաստեղծությանը: Սևակը Նարեկացու նմանությամբ գրել է *«Աղոթքներ»* և իր մեծագույն նախորդին բնորոշել որպես Երգի Արքա: Զևավորվում է Ուսուցչի ու Աշակերտի հարաբերություն: Անմիջապես *«Մարդը ափի մեջ»* ժողովածուից հետո՝ 1964-ին, Սևակը գրեց. «Ես հիմա ոգևորված եմ վաղ միջնադարի հանճարեղ բանաստեղծ Նարեկացիով: <....> Եվ բանաստեղծական ձևի ասպարեզում, և՛ բանաստեղծական մտածողության ասպարեզում Նարեկացու պոեզիան ինձ շատ արժեքավոր բան է տալիս»:

«Մարդը ափի մեջ» ժողովածուի մեջ Նարեկացին օգնեց Սևակին կերտելու ժամանակակից մարդու հարափոփոխ էությունը, ինչպես նաև նրան տվեց գեղարվեստական մտածողության չափ ու ձև, հնչեղություն ու կշռույթ:

Նարեկացու ստեղծագործական ազդեցությունն ու ներգործությունն զգալի է Սևակի և՛ բառապաշարի, և՛ պատկերային համակարգի մեջ: *«Եղիցի լույս»* ժողովածուի համանուն շարքում նա վերարթնացրեց լույսին Նարեկացու տված «զվարթ» և «գերազանցիկ» բնորոշումները: Այլ առիթով առանձնացնում է նաև լույսի նարեկացիական «մանրահեղեղ» մակդիրը: Սևակը ևս տարբեր բանաստեղծությունների մեջ կիրառել է շղթայակապի հնարքը:

«Գրիգոր Նարեկացի» հոդվածում Սևակն առավելապես գնահատում ու բնորոշում է Նարեկացի գրական երևույթը: Նարեկացին, ըստ Սևակի, «ոտքից գլուխ նորարար էր և վիթխարի անհատականություն»: Նարեկացին նրա համար ոչ միայն *«Աստվածախույզ»* էր, այլև *«մարդախույզ»*: Ներքին մարդը, որին Սևակը տեսավ ափի մեջ, ներքնապես մերկացված տեսավ նաև Նարեկացու ողբերգության մատյանի մեջ: Նարեկացուն Սևակը դեռ պետք է անդրադառնար հայ միջնադարյան պոեզիային նվիրված իր ծրագրած աշխատության մեջ: Մտադիր էր նաև աշխարհաբարի փոխադրել *«Մատյան ...»*-ը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ,
Բ. գ. դ., պրոֆեսոր

Սուրբ Դավիթ մարգարե և Հակոբոս Տյառնեղբայր

Հայ Եկեղեցու ծիսական տարվա մեջ կա չորս տոն՝ «Սրբոցն Դաւթի մարգարէին եւ Յակովբայ Տեառնեղբայր առաքելոյն», «Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին», «Սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի», «Սրբոց որդւոցն Որոտման՝ Յակովբայ առաքելոյն եւ Յովհաննու աւետարանչին», որ կոչվում են ավագ տոներ: Սրանք տոնախմբվում են Սուրբ Ծնունդից առաջ՝ դեկտեմբերի 23-ից մինչև 28-ը: Քանի որ Եկեղեցում ծիսական տարին սկսվում է Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնով, մեր Եկեղեցու հայրերը որոշել են այս տոնից առաջ չորս ավագ տոն կարգել՝ նվիրված յոթ կարևոր անձի: Առաջինը կարգել են Դավիթ մարգարեին և Հակոբոս Տյառնեղբորը նվիրված հիշատակության օրը:

Դավիթ մարգարեն, նույն ինքը՝ Դավիթ թագավորը, ապրել է Քրիստոսից առաջ 10-րդ դարում: Կարևոր դեր է ունեցել Իսրայելի՝ որպես թագավորության կայացման գործում: Աստվածաշնչում Դավիթը ներկայացվում է իբրև Աստծու ընտրյալ, որ օծվել է Սամուել մարգարեի կողմից՝ ժողովրդին առաջնորդելու համար: Վերջինս համարվում է կատարյալ թագավորի կերպար և Իսրայելի միակ թագավորն է, որ ներառվել է Հայ Եկեղեցու օրացույց:

Աստվածաշնչում բազմաթիվ պատմություններ են կապված Դավիթ թագավորի հետ: Նա հովիվ էր, որին ընտրում է Սամուել մարգարեն և օծում թագավոր: Աստծուն վստահելով՝ կարողանում է հաղթել Գողիաթին և ճանաչում ձեռք բերել: Սավուղի հետ երկար պայքարից հետո դառնում է Իսրայելի թագավոր և մայրաքաղաքը դարձնում Երուսաղեմը: Ըստ Աստվածաշնչի՝ Դավիթ թագավորն Աստծու հետ վերականգնել է ուխտը, դաշինքը: Հայտնի է, որ Դավիթը ցանկացել է տուն՝ տաճար կառուցել Աստծու համար, քանի որ մինչև այդ ուխտի տապանակը պահվում էր վրանում: Աստված Նաթան մարգարեի միջոցով հայտնում է, որ Դավի՛թը չի կառուցելու տաճարը, այլ իր որդին՝ Սողոմոնը: Միևնույն ժամանակ Աստված խոստանում է Դավթին մի բան, որ շատ ավելի մեծ է. Դավթի տոհմը հավիտյան կգոյատևի, նրա գահը և թագավորությունը կլինեն հաստատուն և հավերժական, և այս ամենը կկատարվի Մեսիայի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, որ պետք է գա Դավթի տոհմից և թագավորի հավիտյան (Բ Թագ. 7:2–16):

Ջերարդ վան Հոնթհորսթ, Դավիթ թագավոր, Իսրայելի թագավոր, 1622 թ.

Հակոբոս Տյառնեղբայրը

Դավիթ մարգարեն Աստվածաշնչի «Սաղմոսներ» գրքի հեղինակն է: Գիրքը բաղկացած է 150 սաղմոսից, որ բնորոշվում են թեմատիկ բազմազանությամբ՝ գովաբանություն, երկրպագություն, զղջում և ապաշխարություն, մարգարեություն և այլն: Դավթի սաղմոսներն ի սկզբանե եկեղեցու ծեսի անբաժան մասն են կազմել:

Դավիթը մահացել է 70 տարեկանում: Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիները Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պես նրա հիշատակության օրը սահմանել են դեկտեմբերի վերջին:

Հակոբոս Տյառնեղբայրը Նոր Կտակարանի կարևորագույն գործիչներից է: Համարվում է Հիսուս Քրիստոսի խորթ եղբայրը կամ մերձավոր բարեկամներից մեկը, այդ պատճառով էլ կոչվում է Տիրոջ եղբայր՝ Տյառնեղբայր (Մատթ. 13:56): Նրան երբեմն անվանում են Փոքր Հակոբոս՝ տարբերելու համար Հակոբոս Զեբեդյանից: Տյառնեղբայրը եղել է Եկեղեցու առաջնորդներից մեկը՝ Երուսաղեմի առաջին եպիսկոպոսը: Սուրբ Գրքից իմանում ենք, որ Հիսուսի քարոզչության ժամանակ շատերը թերահավատորեն էին վերաբերվում Նրան (Հովհ. 7:5) և հավատացյալ դարձան հարությունից հետո, երբ Հիսուսը երևաց Հակոբոսին, հետո՝ բոլոր առաքյալներին (Ա Կորնթ. 15:7):

Նոր Կտակարանում կա Հակոբոսին վերագրվող մի նամակ, որ գրվել է աշխարհում ցրված հրեաների համար: Նամակի կենտրոնական թեման հավատքի և գործերի ներդաշնակությունն է:

Եկեղեցական ավանդության մեջ Հակոբոսը հայտնի է նաև որպես Հակոբ Արդար, քանի որ բարեպաշտական ու կրոնական խիստ վարք է դրսևորել, նրան վերագրում են խիստ աղոթական կյանք: Եվսեբիոսը գրում է, որ նրա ծնկները «ուղտի ծնկներ» էին դարձել՝ երկար աղոթելու սովորույթի պատճառով: Բացի սրանից՝ պատմիչը գրում է, որ Հակոբոսը մահապատժի է ենթարկվել 62 թվականին՝ հրեական ավագանու հրամանով: Նրան Երուսաղեմի տաճարի պարսպից ցած են նետել, ապա քարերով հարվածել և սպանել: Ավանդության համաձայն՝ Հակոբոսի գերեզմանը գտնվում է Երուսաղեմում՝ Սուրբ Հակոբ եկեղեցում, որը Հայոց պատրիարքի աթոռանիստ եկեղեցին է:

Ընդհանրապես Հակոբոս Տյառնեղբայրը կարևոր ազդեցություն է ունեցել հրեա քրիստոնյաների և հեթանոսությունից քրիստոնեության դարձի եկածների միջև համաձայնություն ստեղծելու գործում: Սուրբ Հակոբոս Տյառնեղբայրը մեծ հարգանք է վայելում ինչպես Հայոց, այնպես էլ համաքրիստոնեական Եկեղեցիներում:

Լիանա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Մայիս սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Աստուծոյ օրէնքներուն եւ պատուիրաններուն մասին

➥ էջ 5

ԶԱստուած ճանչցիր քեզ Արարիչ, Անոր պատիւը ուրիշներուն մի՛ տուր,
Աստուծմէ բացի՝ ուրիշ ճար չունիս, ո՛չ ալ երբեք արարածներէն:

Երրորդ հարցում. *Մովսիսական օրէնքի երկրորդ հրամանի մասին*:

Երկրորդ պատուիրանը այս է. Աստուծոյ անունը սնոտի բաներու վրայ մի՛ գործածեր, քանի որ Աստուած պիտի չսրբէ այնպիսիները, որոնք Աստուծոյ անունը սնոտի բաներու վրայ կը գործածեն: Կ'ուզէ ըսել, թէ ինչպէս Աստուած ծայրագոյն բարի է եւ միտքերուն անհասանելի, այդպէս ալ Աստուծոյ անունը անճառելի, սարսռալի եւ ահարկու է. ահով եւ դողութեամբ պաշտելի:

Եթէ ոեւէ մէկը թեւթեւաբար, առանց վախի եւ լիրբ երեսով ըլլայ, Աստուծոյ ահեղ անունէն չերկնչի, պարապ, զուր եւ սուտ տեղը զԱստուած վկայ կանչէ ու երդում ընէ, այդպիսով Աստուծոյ ահեղ անունը ունեայն եւ սին համարած կ'ըլլայ ու զԱստուած իր ստութեան վկայ որպէս կոչած կ'ըլլայ:

Արդարեւ, Աստուծոյ անունը երեք կերպով զուր տեղ գործածած կ'ըլլանք. սիրտով, բերանով եւ գործով:

Սիրտով սին ու դատարկ կ'ընեն Աստուծոյ անունը սուտ քրիստոնեաները, որոնք թէեւ մկրտութիւն ունին, սակայն մկրտութեան շնորհը չունին, այլ միայն արտաքնապէս իրենք զիրենք քրիստոնեայ ցոյց կու տան, մինչ ներքնապէս յափշտակող գայլեր են:

Բերանով ունայն ու դատարկ կ'ընեն Աստուծոյ անունը այն մարդիկը, որոնք չարաչար կ'երդնուն, կ'ուխտեն եւ չեն կատարեր, ինչպէս նաեւ վարդապետները, որոնք վարձք ստանալու համար կը քարոզեն եւ սուտ ու փուչ առակներ կը դնեն Ս. Գիրքին եւ նշանաւոր սուրբերու վրայ: Տակաւին, առանց ջերմեռանդութեան եւ սառն սիրտով աղօթողները, որոնց բերանը աղօթքի է, սակայն սիրտը՝ տան ու տեղին, շահելու եւ դիզելու, ուրիշներուն տունը աւերելու, շնութեան եւ պոռնկութեան մասին մտածելու վրայ է:

Երրորդ՝ մարդիկ գործով դատարկ եւ ունայն կ'ընեն Աստուծոյ անունը, ինչպէս կեղծաւորները, որոնք կեղծաւորութեամբ կը յիշեն Աստուծոյ անունը եւ ո՛չ թէ սիրտի սրբութեամբ: Աստուած այսպիսի մարդոց համար կ'ըսէ, թէ այս ժողովուրդը շրթունքներով կը պատուէ զիս, իսկ իրենց սիրտերը Ինձմէ հեռու են:

Ահեղ Աստուածը լոկ բերանով մի՛ սիրեր,
այլ սուրբ սիրտով եւ լի՛ արդարութեամբ ու ջերմ հաւատքով:

Չորրորդ հարցում. *Մովսիսական օրէնքի երրորդ հրամանի մասին*:

Երրորդ պատուիրանը այս է. շաբաթ օրը սուրբ պահէ: Կ'ուզէ ըսել, քանի որ Աստուած վեց օրուան ընթացքին ստեղծեց բոլոր արարածները եւ եօթներորդ օրը հանգստացաւ, օրհնեց այդ օրը՝ շաբաթը, որ հանգիստ կը թարգմանուի: Այդպէս ալ դուն մարմնական գործերէն հանգստացիր եւ Աստուծոյ օրհնութեան տրամադրուէ՛, ծառայական գործ մի՛ գործեր: Դադրէ՛ մոլութիւններէն եւ մարմնական առուծախերէ, որոնք կը խափանեն աստուածային օրհնութեամբ զբաղիլդ:

Սակայն լաւ գիտցիր, որ մենք շաբաթ օրուան փոխարէն կիրակի օրը կը պահենք՝ ի պատիւ Քրիստոսի յարութեան, որ նոյն օրը՝ կիրակի պատուուեցաւ Հին եւ Նոր օրէնքներուն մէջ: Նախ Աստուծմէ պատուուեցաւ, քանի որ Աստուած կիրակի օրը երկինքը, երկիրը եւ հրեշտակները ստեղծեց, որոնք իրենց ստեղծուած պահէն իսկ սկսան զԱստուած օրհնել. իսկ Սադայէլը, որ չօրհնեց ու չխոնարհեցաւ Աստուծոյ առջեւ, երկինքէն ինկաւ ինք եւ իրեն հետեւողները: Իսկ մենք, ինչպէս հրեշտակները կիրակի օրը սկսանք զԱստուած օրհնել, որով այդ օրը պէտք է մարմնաւոր գործերէ դադրինք եւ Աստուծոյ օրհնութեամբ զբաղինք:

Չըլլայ, որ ըսես՝ երբ կիրակին կը պահեմ, վաստակ չունիմ՝ ինչ ուտեմ, որովհետեւ Աստուած այդ օրուան ապրուստդ, ուտելիքի պաշարդ շաբթուան միւս օրերուն կու տայ, ինչպէս գրուած է Ելից գիրքի 16-րդ գլուխին 19-րդ համարին մէջ, թէ՝ *հրեաները, որոնք շաբաթ օրը պահեցին, Աստուած անոնց երկու օրուան կերակուր տուաւ*, ապա ինչքա՜ն աւելի կիրակի օրը պահողին կու տայ:

Երկրորդ՝ հրեաները կիրակի օրով ազատեցան փարաւոնի գերութենէն, նոյնպէս Քրիստոս կիրակի օրով մեզ դժոխքէն ազատեց:

Երրորդ՝ Աստուած կիրակի օրով տուաւ Հին Օրէնքը Սինայի մէջ, նոյնպէս կիրակի օրով Ս. Հոգին առաքեալներուն վրայ իջաւ եւ Նոր Օրէնքը տուաւ:

Չորրորդ՝ կիրակի օրով աւերուեցաւ Երիքով քաղաքը, նոյնպէս կիրակի օրով անբնակ ու աւեր դարձաւ դժոխքը:

Հինգերորդ՝ Մովսէսի ժամանակ հրեայ մը շաբաթ օրով փայտ հաւաքելու [գնաց, այդ] պատճառով Աստուած հրամայեց, որ քարկոծեն զայն, հապա ինչքա՜ն աւելի քարկոծելի է այն մարդը, որ կիրակի օրով կամաւորաբար մարմնաւոր գործի կ'երթայ:

Վեցերորդ՝ Սամփսոնը կիրակի օրով Գազա քաղաքին երկաթէ դռները իրենց սեմերով քակեց, որ Քրիստոսի յարութիւնը կը խորհրդանշէր, որով [Քրիստոս] դժոխքի պղնձէ դռները խորտակեց եւ Ադամը իր սերունդներով ազատեց: Աստուած մանաւանդ կիրակի օրով տուաւ հրեաներուն, եւ Քրիստոս հացը կիրակի օրով բազմացուց: Քրիստոս կիրակի օրով ծնաւ եւ կիրակի օրով ալ մկրտուեցաւ:

Եօթներորդ՝ թէեւ բոլոր օրերուն Տէրը Աստուած է, սակայն կիրակի օրը յատուկ է Քրիստոսին, քանի որ ըսաւ, թէ Մարդու Որդին շաբաթ օրուան Տէրն է, այդ պատճառով կիրակի կ'ըսուի, որ է Տէրունի:

Ութերորդ՝ Պօղոս առաքեալը Կողոսացիներուն 2-րդ գլուխին 16–17-րդ համարներուն մէջ շաբաթ օրուան համար կ'ըսէ, թէ ստուեր ու շուքն է [գալիք իրականութեան]: Տակաւին, ստուերը յայտնապէս ճշմարիտ բանի մը ստուերը պէտք է ըլլայ: Շաբաթ օրը կիրակի օրուան ստուերն էր, այդ պատճառով Քրիստոս՝ նոր Օրէնսդիրը, շաբաթ օրը չէր պահեր, քանի որ կիրակին պիտի սահմանէր:

Իններորդ՝ Քրիստոս բոլոր բժշկութիւնները շաբաթ օրով կը գործէր, նոյնպէս մեր հոգին մենք պէտք է կիրակի օրը բժշկենք:

Տասներորդ՝ Քրիստոս ըսաւ, թէ առաւելաբար պէտք է շաբաթ օրը բարիք գործել. շաբաթ օրով պէտք է կիրակին հասկնալ: Սակայն հազա՛ր ափսոս. ներկայիս շաբաթ օրով չգործած չարիքը կը պահեն եւ կիրակի օրը կը գործեն՝ արբենալով ու հայհոյելով: ➥ էջ 8

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դմիտրի Լիխաչով. ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022, թիվ 19 – 2023, թիվ 10, 15–17, 19, 21–22

Նամակ քառասուներեքերորդ ԿՐԿԻՆ ԱՆՑՅԱԼԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թույլ կտամ ինձ այս նամակն սկսել որոշ տպավորություններից:

Ահա դրանցից մեկը: 1978 թվականի սեպտեմբերին Բորոդինոյի դաշտում էի՝ իր գործի խանդավառ գիտակ, հիանալի վերականգնող Նիկոլայ Իվանովիչ Իվանովի հետ: Արդյոք ուշադրություն դարձրե՞լ եք այն իրողությանը, թե իրենց գործին նվիրյալ ինչպիսի մարդիկ են հանդիպում հատկապես վերականգնողների և թանգարանային աշխատողների միջավայրում: Նրանք փայփայում են իրերը, և իրերը դրա համար նրանց սիրով են հատուցում: Իրերն ու հուշարձաններն իրենց պահապաններին տալիս են սեր, կապվածություն, ազնիվ նվիրվածություն մշակույթին, իսկ հետո՝ արվեստի ճաշակ ու ըմբռնում, անցյալի հասկացում և սրտահույզ հակում՝ իրենց ստեղծած մարդկանց նկատմամբ: Մարդկանց կամ թե հուշարձանների նկատմամբ իսկական սերը երբեք անպատասխան չի մնում: Այդ պատճառով են ահա մարդիկ գտնում միմյանց, իսկ մարդկանց խնամած երկիրը գտնում է իրեն սիրող մարդկանց, և ինքն էլ նրանց պատասխանում նույն կերպ:

Ներքուստ հենց այդպիսի հարուստ մարդ էր ինձ հետ Բորոդինոյի դաշտում՝ Նիկոլայ Իվանովիչը: Նա տասնհինգ տարի արձակուրդ չի գնացել. չի կարող հանգստանալ Բորոդինոյի դաշտից դուրս: Նա ապրում է Բորոդինոյի ճակատամարտի մի քանի օրերով և օրերո՛վ, որոնք նախորդել են ճակատամարտին: Բորոդինոյի դաշտը հսկայական դաստիարակչական նշանակություն ունի:

Ատում եմ պատերազմը. ես տեսել եմ Լենինգրադի շրջափակումը, նացիստների գնդակոծումը խաղաղ բնակիչներին Դուդերգոֆի բարձունքների դիրքերի տաք թաքստարաններից, ես ականատեսն էի այն հերոսության, որով խորհրդային մարդիկ պաշտպանում էին իրենց հայրենիքը, որով անիմանալի աննկունությամբ դիմադրում էին թշնամուն: Հնարավոր է՝ այդ պատճառով Բորոդինյան ճակատամարտը՝ իր բարոյական ուժով ինձ միշտ ապշեցնող, նոր իմաստ ձեռք բերեց ինձ համար: Ռուս զինվորները Ռևսկու մարտկոցով չլսված համառությամբ հետ են մղել մեկը մյուսին հաջորդող ութ կատաղի հարձակում:

Վերջում երկու բանակների զինվորները կռվում էին կատարյալ մթության մեջ՝ շոշափելով: Ռուսների բարոյական ուժը տասնապատկվել էր Մոսկվան պաշտպանելու անհրաժեշտությամբ: Եվ մենք՝ ես և Նիկոլայ Իվանովիչը, խոնարհեցինք մեր գլուխները Բորոդինոյի դաշտում երախտապարտ հետնորդների կանգնեցրած հերոսների հուշարձանի առջև...

Պատանեկությանս տարիներին առաջին անգամ եկա Մոսկվա և հանկարծակի հանդիպեցի Պոկրովկա փողոցի Ս. Աստվածածնի վերափոխման եկեղեցուն (1696–1699): Ես նախկինում ոչինչ չգիտեի նրա մասին: Այդ հանդիպումն ինձ ապշեցրեց: Իմ առջև խոյանում էր ճերմակակարմիր ժայռակների քարացած ամպ: Չկար «ճարտարապետական զանգված»: Նրա թեթևությունն այնպիսին էր, որ այն ամբողջովին թվում էր անհասանելի գաղափարի մարմնացում, ինչ-որ չլսված գեղեցիկի երազանք: Այն չէր կարելի պատկերացնել պահպանված լուսանկարներով և նկարներով, այն պետք էր տեսնել ցածր, հասարակ շենքերի շրջապատում: Ես ապրում էի այդ հանդիպման տպավորությամբ և հետագայում սկսեցի զբաղվել հինռուսական մշակույթով հենց այդ ժամանակ ստացած ազդակով: Ա. Վ. Լունաչարսկու նախաձեռնությամբ՝ հարևան նրբանցքն անվանվեց եկեղեցու շինարար, ճորտ գյուղացի Պոտապովի ազգանունով: Բայց ահա եկան մարդիկ և քանդեցին եկեղեցին: Այժմ այս վայրում դատարկություն է...

Իսկ ո՞վքեր են կենդանի անցյալը ոչնչացնող այդ մարդիկ, անցյալ, որը նաև մեր ներկան է, քանզի մշակույթը չի մեռնում: Երբեմն դրանք հենց իրենք՝ ճարտարապետներն են, որոնք շատ են ցանկանում իրենց «ստեղծագործությունը» կանգնեցնել շահեկան վայրում և ծուլանում են մտածել այլ բանի մասին: Երբեմն էլ դրանք բոլորովին պատահական մարդիկ են, իսկ այդ դեպքում արդեն մենք բոլորս ենք մեղավոր: Մենք պետք է մտածենք այն մասին, որ նման բան չկրկնվի: Մշակութային հուշարձանները պատկանում են ժողովրդին և ոչ թե միայն մեր սերնդին: Մենք դրանց համար պատասխանատվություն ենք կրում մեր հետնորդների առաջ: Մեզանից մեծ հաշիվ են պահանջելու թե՛ հարյուր, թե՛ երկու հարյուր տարի անց:

Պատմական քաղաքները բնակեցնում են ոչ միայն նրանք, ովքեր այժմ այնտեղ ապրում են: Դրանք բնակեցնում են անցյալի նշանավոր մարդիկ, որոնց մասին հիշողությունը չի կարող մեռնել: Լենինգրադի ջրանցքներում արտացոլվել են Պուշկինն ու Դոստոևսկին՝ իր «Սպիտակ գիշերները» վիպակի կերպարների հետ միասին:

Մեր քաղաքների պատմական մթնոլորտը չի կարելի արձանագրել ոչ մի լուսանկարով, վերարտադրմամբ կամ մանրակերտով: Այս մթնոլորտը կարելի է երևան բերել, ընդգծել վերակառուցումներով, սակայն կարելի է նաև հեշտությամբ ոչնչացնել, ոչնչացնել անհետք: Այն անվերականգնելի է: Պետք է պահպանենք մեր անցյալը. այն ունի ամենաազդեցիկ դաստիարակչական նշանակությունը: Այն պատասխանատվության զգացում է դաստիարակում հայրենիքի նկատմամբ: Ահա թե ինձ ինչ պատմեց Կարելիայի ժողովրդական ճարտարապետության վերաբերյալ բազմաթիվ գրքերի հեղինակ, պետրոզավոդսկցի ճարտարապետ Վ. Պ. Օրֆինսկին: 1971 թվականի մայիսի 25-ին Մեդվեժեգորսկի շրջանի Պելկուլա գյուղում այրվել է ԺԷ դարասկզբի եզակի մատուռ՝ պետական նշանակության ճարտարապետական հուշարձան: Եվ ոչ ոք անգամ չփորձեց պարզել դեպքի հանգամանքները...

1975 թվականին այրվեց ևս մեկ պետական նշանակության ճարտարապետական հուշարձան՝ Մեդվեժեգորսկի շրջանի Տիպինիցի գյուղի Ս. Համբարձման եկեղեցին՝ ռուսական հյուսիսի ամենահետաքրքիր վրանաձև եկեղեցիներից մեկը: Պատճառը կայծակն էր, սակայն իրական հիմնապատճառը՝ անպատասխանատվությունն ու անփութությունը. Ս. Համբարձման եկեղեցու վրանային բարձր սյուները և դրանց ամրակցված զանգակատները չունեին տարրական ամպրոպապաշտպանություն:

Արխանգելսկի մարզի Ուստյանսկի շրջանի Բեստուժևո գյուղում ընկավ ԺԸ դարի Ս. Ծննդյան եկեղեցու վրանը՝ վրանային ճարտարապետության ամենաարժեքավոր հուշարձաններից մեկը՝ համալիրի վերջին տարրը՝ ճշգրտորեն տեղադրված Ուստյա գետի ոլորանում: Պատճառը լիակատար անխնամությունն էր:

Իսկ ահա մի փոքրիկ փաստ Բելառուսի մասին: Դոստոևո գյուղում, որտեղից ծագել են Դոստոևսկու նախնիները, կար ԺԸ դարի մի փոքրիկ եկեղեցի: Այն պետական պաշտպանության ներքո չէր, սակայն խիստ բնորոշ էր ԺԸ դարի բելառուսական գյուղական ճարտարապետությանը: Ճարտարապետ Տ. Վ. Գաբրուսն այլ մասնագետների հետ չափագրում էր այս եկեղեցին: Երբ ճարտարապետները հեռացան, տեղական իշխանությունները վախենալով, որ հուշարձանը կհաշվառվի որպես պահպանվող, պատասխանատվությունից ազատվելու համար հրամայեցին բուլդոզերներով քանդել եկեղեցին: Նրանից մնացել են միայն չափագրումներն ու լուսանկարները: Դա տեղի է ունեցել 1976 թվականին:

Այսպիսի փաստեր կարելի էր շատ հավաքել: Իսկ ի՞նչ անել, որ դրանք չկրկնվեն: Ամենից առաջ անհրաժեշտ է դրանց մասին չմոռանալ, չձևացնել, թե դրանք տեղի չեն ունեցել: Անբավարար են և՛ արգելքներն ու հրահանգները, և՛ «Պահպանվում է պետության կողմից» մատնանշումով ցուցանակը: Անհրաժեշտ է, որ մշակութային ժառանգության նկատմամբ խուլիգանական կամ անպատասխանատու վերաբերմունքի դեպքերը պարտադիր կերպով հետաքննվեն դատարաններում, և մեղավորներին խստագույնս պատժեն: Բայց սա ևս քիչ է: Բացարձակապես անհրաժեշտ է արդեն իսկ միջնակարգ դպրոցում գավառագիտություն ուսումնասիրել, սեփական գավառի պատմությունն ու բնությունն ուսումնասիրող խմբակներում սովորել: Հենց երիտասարդական կազմակերպություններն են, որ առաջին հերթին պետք է իրենց հովանավորության տակ առնեն իրենց գավառի պատմությունը: Եվ վերջապես ամենակարևորը՝ միջնակարգ դպրոցի պատմության դասավանդման ծրագրերում պետք է նախատեսել տեղական պատմության դասեր:

Սեփական հայրենիքի նկատմամբ սերը ինչ-որ վերացական բան չէ. այն նաև սեր է սեփական ժողովրդի, սեփական տեղանքի, նրա մշակութային հուշարձանների հանդեպ, հպարտություն՝ սեփական պատմությամբ: Ահա թե ինչու դպրոցում պատմության դասավանդումը պետք է որոշակի լինի՝ հիմնված սեփական շրջանի պատմության, մշակույթի, հեղափոխական անցյալի հուշարձանների վրա:

Չի կարելի պարզապես հայրենասիրության կոչ անել, այն պետք է հոգատարությամբ դաստիարակել, դաստիարակել սեր հայրենի վայրերի նկատմամբ, դաստիարակել հոգևոր հաստատունություն: Իսկ այս ամենի համար անհրաժեշտ է զարգացնել մշակութային բնապահպանության գիտությունը: Մանրակրկիտ գիտական ուսումնասիրության պետք է ենթարկվեն ոչ միայն բնության, այլև մշակութային միջավայրը, մշակութային հուշարձանների միջավայրը և դրա ազդեցությունը մարդկանց վրա:

Չլինեն արմատներ հայրենի վայրում, հայրենի երկրում կլինեն բազմաթիվ մարդիկ՝ նման տափաստանային դաշտագլոր բույսին:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝ Տ. Անդրեաս վրդ. ԵՂԵԿՅԱՆԻ

Վասուծոյ օրէնքներուն եւ պատուիրաններուն մասին

↩ *էջ 5, 7*

Տասնմէկերորդ՝ Քրիստոս եւ սուրբ առաքեալները քարոզութիւնը շաբաթ օրը կ՚ընէին, որովհետեւ հրեաները այդ օրը կը հաւաքուէին սինակոկի մէջ, նոյնպէս քրիստոնեաները անպայման կիրակի օրը պէտք է լսեն քարոզութիւնը: Բայց հազա՜ր ափսոս. արդեօք ինչքա՞ն հայիոյանք կը լսէ այն վարդապետը, որ կիրակի օրը քարոզ կու տայ:

Տակաւին, Քրիստոս հրեաներուն ըսաւ, թէ առաւելաբար շաբաթ օրը պէտք է բարիք գործել, հոգին ապրեցնել, քան թէ կորսնցնել: Այդ պատճառով Քրիստոս երեսունութ տարուան անդամալոյծը, տեռատես կինը, տասնութ տարուան սատանայէն կապուած կինը, ի ծնէ կոյրը, ջրգողեալ մարդը եւ գօսացած ձեռքը շաբաթ օրով բժշկեց, յօրինակ կիրակի օրով մեր հոգիի բժշկութեան:

Տասներկրորդ եւ գլխաւորը՝ Քրիստոս կիրակի օրով յարութիւն առաւ:

Կիրակի օրով Ս. Սիոնի փակ դռներով վերնատունը մտաւ եւ Թովմասին թերահաւատութիւնը հաստատեց:

Կիրակի օրով Մարիամ Մագթաղենացիին եւ Պետրոս առաքեալին երեւցաւ: Այլեւ Յակոբոս Տեառնեղբօր առջեւ բարիքներով լեցուն սեղան դրաւ Իր յարութեան օրը՝ կիրակի:

Կիրակի օրով ողջոյն եւ խաղաղութիւն տուաւ Գալիլիոյ մէջ հաւաքուած առաքեալներուն, ցոյց տալով, թէ ով որ Իմ կիրակիս կը պահէ, Իմ ողջոյն եւ խաղաղութիւնս անոր վրայ կ՚ըլլայ:

Կիրակի օրով Գաբրիէլ Հրեշտակապետը պայծառ հագուստով երեւցաւ Քրիստոսի գերեզմանին մօտ՝ ուրախութեան ի նշան, եւ լացող կիներուն ըսաւ, թէ ինչո՞ւ համար կենդանին մեռելներուն մէջ կը փնտռէք, այստեղ չէ, այլ յարութիւն առաւ. սուգը փարատեցէք եւ ինծի նման պայծառ հագուստ զգեցէք: Այս օրհնեալ սովորութիւնը մնաց, որով բարի քրիստոնեաները կիրակի օրը նոր հագուստներ կը հագուին ի պատիւ Քրիստոսի յարութեան: Սակայն լաւ կ՚ըլլար, եթէ այդ հագուստէն ետք իրենց հոգին ալ խոստովանութեամբ զարդարէին, ինչպէս կ՚ըսէ Դաւիթ մարգարէն, թէ խոստովանութիւն եւ մեծ վայելչութիւն զգեցար:

Տասներեքերորդ՝ Քրիստոսի սուրբ խաչը կիրակի օրով երեւցաւ Ս. Գողգոթայի վրայ եւ մինչեւ Ձիթենեաց սուրբ լեռը ցոլացաւ:

Տասնչորրորդ՝ Քրիստոսի երկրորդ գալուստը կիրակի օրով պիտի ըլլայ, եւ կիրակի օրը աներեկոյ պիտի մնայ յաւիտեանս յաւիտենից:

Ով որ կիրակի օրը պահէ, բազմաթիւ վարձքի է արժանի.

Ով որ չի՛ պահէ կամ չար գործէ, բազմաթիւ դժուարութիւններու կը հանդիպի:

Յակոբ պատրիարք ՆԱԼԵԱՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ (1806)
Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝ Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝ krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 26.06.2024 թ.
Տպաքանակը՝ 1265